

17743

Ա. ՅԱ. ՎԻՇԻՆՍԿԻ

ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՐՑ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐՈՎ

324

Վ-63

ՀԱՅԿՈՒՍՏՐԱՏ • 1987 • ՅԵՐԵՎԱՆ

26 SEP 2006

324
4-63

Պրովետարներ թուր յերկիրների, արացե՛ք

✓

Ա. ՅԱ. ՎԻՇԻՆՍԿԻ

ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՐՑ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐՈՎ

6301
16

12 AUG 2013

19893

ՀՀ Կոնստիտուցիոն ազդեցություն

ՀՀ Կոնստիտուցիոն ազդեցություն

ՀՀ Կոնստիտուցիոն ազդեցություն
ՀՀ Կոնստիտուցիոն ազդեցություն



1389

37

А. Я. ВЫШИНСКИЙ
ПОЛОЖЕНИЕ О ВЫБОРАХ
В ВЕРХОВНЫЙ СОВЕТ СССР
В ВОПРОСАХ И ОТВЕТАХ

Армпартиздат, Ереван, 1987

Գ Լ Ո Ւ Խ Ի

ԸՆՏՐԱԿԱՆ ՍԽԱՏԵՄԸ

ՀԱՐՑ 1. — Ի՞նչ է «ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ընտրությունների կանոնադրությունը» և յե՞րբ է հաստատվել այն:

ՊԱՏԱՍԽԱՆ. — «ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ընտրությունների կանոնադրությունը» հաստատված է ԽՍՀՄ ԿԳԿ-ի IV սեսիայի կողմից 1937 թ. հունիսի 9-ին: «ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ընտրությունների կանոնադրությունը», կամ, ինչպես այլ կերպ անվանում են այն, ԽՍՀՄ Ընտրական օրենքը, ինքնին ներկայացնում է մի ընտրակցի այն մասին, թե ինչպես պետք է անցկացնել ԽՍՀՄ իսկական Գերագույն խորհրդի ընտրությունները: «Կանոնադրության» խնդիրն է ապահովել Ստալինյան սահմանադրության պահանջների այն մասը, ճշգրտել կատարելը, վերջը վերաբերում է ընտրական սխեմային:

«Կանոնադրությունը» ծառայում է վերականգնել մի գործնական ձեռնարկ՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ընտրություններն անցկացնելու գործում:

ՀԱՐՑ 2. — Ինչի՞նչ մասին է խոսվում «ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ընտրությունների կանոնադրության» մեջ:

ՊԱՏԱՍԽԱՆ. — «ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ընտրությունների կանոնադրության» մեջ խոսվում է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավորների ընտրությունները կատարելու կարգի մասին:

«Կանոնադրության» մեջ մանրամասնորեն չարդարվում են ընտրական սխեմայի սկզբունքները, վերջինը սահմանված են մեր մեծ Ստալինյան սահմանադրությամբ, կանոններն այն մասին, թե ինչպես են կազմվում ընտրողների ցուցակները, ինչպես են առաջադրվում ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավորության թեկնածուները, ինչպես են կազմվում ընտրական օկրուգները ու ընտրական տեղամասերը, ինչպես և ում կողմից են կազմվում ընտրական հանձնաժողովները, ինչպես նաև ընտրական հանձնաժողովների իրավունքներն ու պարտականությունները, ինչպես և կատարվում քվեարկությունը և ինչպես են վերջում ընտրությունների արդյունքները:

ՀԱՐՑ 3.—Ի՞նչն է յեղել «ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրությունների կանոնադրություն» հրատարակման առիթը:

ՊԱՏԱՍԽԱՆ.— «ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրությունների կանոնադրություն» հրատարակման առիթը յեղել է ընտրությունների կազմակերպված և Սահմանադրությունը ճիշտ համապատասխանող ձևով անցկացնելու անհրաժեշտությունը:

Առանց այդպիսի «Ընտրությունների կանոնադրություն» անհնարին կլինեք կազմակերպված և արագ կերպով անցկացնել մի այնպիսի բարդ աշխատանք, վերադառնալով ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրություններն են, և այն ել մի այնպիսի մեծ պետություն մեջ, վերադառնալով մեր սոցիալիստական հայրենիքն է:

Ահա թե ինչու «Կանոնադրություն» այդպիսի խոշոր նշանակություն ունի: Ահա թե ինչու ԽՍՀՄ յուրաքանչյուր քաղաքացի պետք է իմանա «Կանոնադրությունը» և կարողանա լավ հասկանալ այն:

ՀԱՐՑ 4.—Ինչո՞ւ է տարբերվում մեր Ընտրական որենքը կապիտալիստական յերկիրների ընտրական որենքներից:

ՊԱՏԱՍԽԱՆ.— «ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրությունների կանոնադրությունը»—ԽՍՀՄ Ընտրական որենքը կապիտալիստական յերկիրների ընտրական որենքներից տարբերվում է արմատական կերպով:

Նա նրանից տարբերվում է նույնպիսի վճռականությամբ, վերադառնալով վճռականությամբ մեր Սահմանադրությունը տարբերվում է բուրժուական սահմանադրություններից:

ՀԱՐՑ 5.— Ինչո՞ւ է կայանում բուրժուական սահմանադրությունների ելությունը:

ՊԱՏԱՍԽԱՆ.— Բուրժուական սահմանադրությունների ելությունը կայանում է նրանում, վոր նրանք, այդ բուրժուական սահմանադրությունները, ամրապնդում են շահագործողների և կեղեքիչների տիրապետությունը, կապիտալիստների և կալվածատերերի իշխանությունը: Բուրժուական սահմանադրություններն ապահովում են հասարակական և պետական այնպիսի կարգ, վորը հենվում է արտադրության միջոցների ու գործիքների մասնավոր սեփականության վրա, մարդը մարդուն շահագործելու վրա, մի բուռն կալվածատերերի ու կապիտալիստների կողմից բանվորների և գյուղացիների միլիոնավոր մասսաներին կեղեքելու վրա:

Բուրժուական սահմանադրությունը, ինչպես և բուրժուական

դեմոկրատիան, դա, ըստ Լենինի արտահայտություն, «դրախտ և հարուստների համար, թափարդ ու խաբեյություն՝ շահագործվողների համար, չքավորների համար»:

ՀԱՐՑ 6.— Ի՞նչ է ասում ընկեր Ստալինը բուրժուական սահմանադրությունների առանձնահատկությունների մասին:

ՊԱՏԱՍԽԱՆ.— Սահմանադրության նախագծի մասին Խորհուրդների VIII արտակարգ համագումարին տված իր պատմական ղեկուցման մեջ ընկեր Ստալինը, ընդգծելով բուրժուական սահմանադրությունների առանձնահատկությունները և նրանց ամբողջ սկզբունքային տարբերությունը Խորհրդային սահմանադրությունից, ասաց. «Բուրժուական յերկիրների սահմանադրությունները սովորաբար յենում են կապիտալիստական հասարակարգի անսասան լինելու համոզմունքից: Այդ սահմանադրությունների գլխավոր հիմքն են կազմում կապիտալիզմի սկզբունքները, նրա գլխավոր հիմունքները—հողի, անտառների, ֆաբրիկաների, գործարանների և արտադրության այլ գործիքների ու միջոցների մասնավոր սեփականությունը. մարդու շահագործումը մարդու կողմից և շահագործողների ու շահագործվողների առկայությունը. աշխատավոր մեծամասնությունը ապահովված չլինելը հասարակության մեկ բևեռում և չաշխատող, բայց ապահովված փոքրամասնության ճոխությունը մյուս բևեռում և այլն և այլն: Նրանք հենվում են կապիտալիզմի այս և սրանց նման հիմունքների վրա: Նրանք արտացոլում են այս ամենը, նրանք որենադրական կարգով ամրապնդում են այս բոլորը»¹:

Ընկեր Ստալինը մատնանշել է բուրժուական սահմանադրությունների ևս յերեք առանձնահատկություն—բուրժուական սահմանադրությունները յենում են այն նախադրյալից, վոր հասարակության պետական ղեկավարությունը (գլխատուրան) պետք է պատկանի բուրժուազիային և վոր սահմանադրությունը հարկավոր է ունենոր դասակարգերին հաճելի ու ձեռնտու հասարակական կարգերն ամրապնդելու համար. վոր ազգերը և ռասաները չեն կարող իրավահավասար լինել. բուրժուական սահմանադրությունները սովորաբար սահմանափակվում են քաղաքացիների իրավունքների հոչակմամբ, չհողալով այն մասին, վոր-

¹ Ստալին, ԽՍՀ Միության Սահմանադրության նախագծի մասին, էջ 27—28, Հայկուհրատ, 1937 թ.:

պեսզի քաղաքացիները կարողանան ռեալ կերպով կենսադործել այդ իրավունքները:

ՀԱՐՅ 7. — Ինչո՞ւմ է կայանում Ստալինյան սահմանադրութ-
յան հիմնական առանձնահատկությունը:

ՊՍՏՍՍՍՆ. — Այդ առանձնահատկությունը կայանում է նրանում, վոր մեր Ստալինյան սահմանադրությունը հանդիսա-
նում է վորպես վերջնականապես և անվերադարձ կերպով հաղ-
թանակած սոցիալիզմի սահմանադրություն:

Նա իրենից ներկայացնում է անցած ուղու հանրադրամարը,
արդեն իսկ ձեռք բերած նվաճումների հանրադրամարը:

Այս նվաճումները կայանում են կապիտալիստական հասա-
րակակարգն իր շահագործմամբ, աղքատությունը ու ժողովրդա-
կան մասսաների տառապանքներով մեկտեղ լիկվիդացիայի յեն-
թարկելու փաստի մեջ: Նրանք կայանում են՝ կարվածատերերի
ու ֆաբրիկանտների իշխանությունը տապալող և իրենց իշխանու-
թյունը հաստատող, միանգամ ընդմիջտ նոր, սոցիալիստական
հասարակություն կառուցող ու ամրապնդող բանվորների ու գյու-
ղացիների հաղթանակի մեջ:

Այն մասին, ինչը կազմում է նոր Սահմանադրության գլխա-
վոր հիմքը, նոր Սահմանադրության նախագծի մասին խորհուրդ-
ների VIII արտակարգ համագումարում տված ղեկուցման մեջ
ընկեր Ստալինն ասաց.

«ՈՍՀՄ՝ նոր Սահմանադրության նախագծի գլխավոր հիմքը
կազմում են սոցիալիզմի սկզբունքները, սրա գլխավոր հիմունք-
ները, վորոնք արդեն նվաճված և իրականացված են՝ հողի, ան-
տառների, ֆաբրիկաների, գործարանների և արտադրության այլ
գործիքների ու միջոցների սոցիալիստական սեփականությունը.
շահագործման ու շահագործող դասակարգերի վերացումը. մե-
ծամասնության աղքատության և փոքրամասնության ճոխության
վերացումը. գործադրության վերացումը. աշխատանքը՝ վորպես
յուրաքանչյուր աշխատունակ քաղաքացու պարտականություն և
պատվի պարտք՝ «ով չի աշխատում, նա չի ուտում» ֆորմուլայի
համաձայն: Աշխատանքի իրավունքը, այսինքն՝ ապահովված աշ-
խատանք ստանալու վերաբերյալ յուրաքանչյուր քաղաքացու իրա-
վունքը, հանդստի իրավունքը, կրթության իրավունքը և այլն
և այլն: Նոր Սահմանադրության նախագիծը հենվում է սոցիալ-
իզմի այս և սրանց նման հիմունքների վրա: Նա արտացոլում

է այդ հիմունքները, նա որենպդրական կարգով ամրապնդում է
դրանք»¹:

Մեր մեծ Ստալինյան սահմանադրությունը յեղում է այն
բանից, վոր «հասարակության պետական ղեկավարությունը
(ղեկատվություն) սրտկանում է բանվոր դասակարգին՝ վորպես
հասարակության առաջավոր դասակարգի, վոր սահմանադրու-
թյունը հարկավոր է նրա համար, վորպեսզի ամրապնդենք աշ-
խատավորությանը ցանկալի և ձեռնադր հասարակական կարգերը»
(Ստալին):

Մեր մեծ Ստալինյան սահմանադրությունը հաստատում է
ազգերի ու ռասաների լիակատար իրավասավասարություն, ապա-
հովում է քաղաքացիների կողմից իրենց պատկանող իրավունք-
ների ռեալ իրականացումը, աչքի չէ ընկնում հետևողական, իս-
կական դեմոկրատիզմով՝ սոցիալիստական դեմոկրատիզմով:

Միթե պարզ չէ, վոր մեր սահմանադրությունը արմատապես
տարբերվում է բուրժուական սահմանադրություններից, վոր
այդպիսիներն իրար հետ համեմատել ել անկարելի չէ:

ՀԱՐՅ 8. — Ի՞նչ փոխադարձ հարաբերություն մեջ են
դասվում սահմանադրություններն ու ընտրական որենքները կա-
պիտալիստական յերկիրներում:

ՊՍՏՍՍՍՆ. — Նույնիսկ ամենաառաջավոր և առավել դեմո-
կրատական կապիտալիստական յերկիրներում սահմանադրու-
թյունն ու ընտրական որենքը փոխադարձաբար դասվում են ա-
ղապակող հակասության մեջ:

Այդ հակասությունը կայանում է նրանում, վոր բուրժուա-
կան դեմոկրատիայի յերկիրներ ընտրական որենքներում աջ ու
ձախ դասվում են սահմանադրությունների սմեն սեփակ սահմա-
նավումները, սմեն տեսակ «ճշտումներ», «հավերժումներ», «ծա-
նոթագրություններ» և այլն, վորոնք հաճախ հանդիսանում են
վորպես սովյալ սահմանադրության աղաքարած սկզբունքներից
կատարվող բացահայտ ջեղումներ:

Բուրժուական ընտրական որենքները աջ ու ձախ աղապակի փո-
փոխություն են յենթարկում, վերածվում են սահմանադրություն-
ներից, «պարզաբանումների» անվան տակ ներս են յնցկում սահ-
մանադրությունների այս կամ այն, յառնանկապես բուրժուազիա-
յի համար վնչ-ցանկալի, դուրչմներն ուղղակի փոփոխում

1 Ստալին, ՈՍՀ Միության Սահմանադրության նախագծի մասին, էջ 28.

Հալիվաճառ, 1937 թ.: գրք. II. Դ. ՌՈՍՏՈՅԵՆՈՎ ԵՄԻՆԱԳՈՏԵՆ, ԵՊՐՈՍ

Ընկեր Ստալինն ասում է, վոր բուրժուական մի շարք սահմանադրություններ հաճախ ունեն այնպիսի վերապահումներ ու սահմանափակումներ, վորոնց չնորհիվ դեմոկրատական իրավունքներն ու ազատությունները խեղաթյուրված են դուրս դալիս:

Ընտրական որենքները բուրժուական յերկիրներում սովորաբար ամենից ավելի լավ են կատարում սահմանադրությունները «խեղաթյուրելու» այդ դերը:

Բուրժուական սահմանադրությունների առթիվ Մարքսը գրում էր. «Սահմանադրության յուրաքանչյուր պարագրաֆ իր մեջ պարունակում է իր սեփական հակասությունը, իր սեփական վերին և ներքին պայտաթ. ազատություն—ընդհանուր Փրագադյում, ազատության վերացում—վերապահության մեջ»¹:

Բուրժուական սահմանադրությունները տառապում են մի հիմնական թերությամբ—ներքին հակասությամբ, կեղծիքով, կեղծավորությամբ:

Բուրժուական սահմանադրությունների սկզբունքների և պրակտիկայի միջև յեղած այդ հակասությունը առանձնապես խիստ կերպով անդրադառնում է ընտրական որենքների վրա, վորոնք այնպես են «չտկում» այդ սահմանադրությունները, վոր նրանցից հաճախ վոչինչ չի մնում:

ՀԱՐՅ 9.—Ի՞նչ փոխադարձ հարաբերության մեջ են գտնվում խորհրդային սահմանադրությունն ու խորհրդային Ընտրական որենքը:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Խորհրդային սահմանադրության և խորհրդային Ընտրական որենքի մեջ մենք գտնում ենք միևնույն սկզբունքները, միևնույն հիմունքները, միևնույն գաղափարները: ԽՍՀՄ Ընտրական որենքն ուղղված է դեպի ԽՍՀՄ Սահմանադրության կողմից հաստատված ընտրական սխեմեմի առավել լիակատար կենսադործումը:

Ընտրական նոր որենքի գլխավոր նշանակությունը կայանում է նրանում, վոր Ընտրական նոր որենքը ոգնում և հեշտացնում է կենսադործումը Ստալինյան սահմանադրության մեծագույն սկզբունքի—խորհրդային ընդհանուր, հավասար, ուղղակի՝ գաղտնի քվեարկությամբ ընտրական իրավունքի՝ կենսադործումը: ԽՍՀՄ Ընտրական որենքը չի խուզում, չի սահմանափակում, չի «ուղղում» Սահմանադրությունը, ինչպես այդ անում են բուրժուական

ընտրական որենքները բուրժուական սահմանադրություններին նկատմամբ, այլ աղահոլում է Ստալինյան սահմանադրության, և հատկապես նրա այն մասի, վորը նախկինում է ընտրական նոր սխեմեմին, առավել լիակատար, հստակ, ճիշտ և հետևողական իրականացումը կյանքում:

ՀԱՐՅ 10.—Յեղե՞լ են արդյոք նախկինում խորհրդային իշխանության ժամանակ ուրիշ ընտրական որենքներ:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Ընտրական որենքներ մեզնում առաջ ել յեղել են: Նրանք դործում էին «Խորհուրդների ընտրությունների հրահանդներ» անվան տակ: Նրանք հրատարակվում էին ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի և միութենական հանրապետությունների կենտրոնական գործադիր կոմիտեների կողմից:

ՀԱՐՅ 11.—Ընտրական նոր որենքն ինչո՞վ է տարբերվում խորհրդային իշխանության նախկին ընտրական որենքներից:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Ընտրական նոր որենքը նույնպես է տարբերվում նախկին ընտրական որենքներից, ինչպես նոր Սահմանադրությունն է տարբերվում մեր հին սահմանադրություններից:

Խորհրդային նախկին սահմանադրությունները խորհրդային որդանների ընտրությունների ժամանակ դյուղացիների վերաբերմամբ բանլորներին համար վորոշ արտոնություններ էին սահմանում: Որինակ, միութենական հանրապետությունների և ԽՍՀՄ միության խորհուրդների համագումարների ընտրությունների ժամանակ քաղաքային խորհուրդների ներկայացուցիչներն ընտրվում էին 25 հազար ընտրողներից մի պատգամավոր տալու հաշվով, իսկ խորհուրդների համագումարներից, վորտեղ գերակշռում է դյուղացիական բնակչությունը—1 պատգամավոր 125 հազ. բնակիչներից: Այս բանն աղահոլում էր մեծամասնությունը բանլորների կողմը լինելը: Սա, հասկանալի չէ, վորոշ անհավասարություն էր ստեղծում բանլորների ու դյուղացիների միջև: Սակայն այն ժամանակվա պայմաններում այդ անհավասարությունն անխուսափելի չէր, այն ստեղծել էր հենց ինքը կյանքը, դաժակարգային պայքարի ընթացքը:

Այս առթիվ Լենինը գրել է. «... այնպիսի միջոցառումներ, վորպիսին բանլորների ու դյուղացիների անհավասարությունն է, սահմանադրությունն ամենևին ել չի կանխադրում: Սահմանադրությունն այդպիսիները գրեց այն բանից հետո, յերբ նրանք մուծվեցին կյանքի մեջ... Պրոլետարիատի կազմակերպությունը շատ ավելի արագ էր ընթանում, քան դյուղացիության կազմակերպությունը, վորը բանլորներին դարձնում էր

¹ Маркс, Избранные произведения, т. II, стр. 261, Партиздат, 1935 г.

հեղափոխութեան նեցուկ և փաստորեն նրանց առաջելութիւնը եր
տալիս: Այնուհետեւ կանգնած ե մի խնդիր. այդ առաջելութիւնը
ներից աստիճանաբար անցնել ղեպի նրանց հաւասարեցումը¹:

«Հոգուտ բանվորներին այդ առաջելութիւնները, —ասել է
ընկ. Մոլոտովը, —ներմուծվել եյին այն ժամանակ, յերբ գլուղա-
ցիները ղեռնա մարդկայեւ մանր սեփականատերեր եյին, և
գլուղում ղեռնա մեծ եր կուլակութեան աղղեցութիւնը: Այդ
առաջելութիւնները ամրապնդեցին բանվոր դասակարգի ղեկա-
վար դերը խորհրդային պետութեան մեջ, ողնում եյին խորհրդ-
դային իշխանութեան ամրապնդմանը և, դրա հետ մեկտեղ, ա-
պահովեցին պրոլետարական ղեկատուութեան լայն ողնութիւնը
աշխատավոր գլուղացիութեանը գլուղատնտեսութեան վերելքի
գործում և այնուհետեւ գլուղի սոցիալիստական վերակառուցման
հետագա խնդրում: Կուլակցութիւնը միշտ ել մատնանշում եր,
վոր այդ առաջելութիւնները հոգուտ բանվորներին իր ժամանա-
կին անհրաժեշտ եյին պրոլետարական հեղափոխութեան նվաճում-
ներն ապահովելու համար, և ընդդմին անշեղորեն ընդդժում եր
նրանց ժամանակավոր բնույթը»²:

Համաձայն ներկայիս Ընտրական որենքի՝ բանվորի ձայնը
հավասար է գլուղացու ձայնին—Գերագույն Խորհրդի ընտրու-
թիւնները կատարվում են ընտրական հավասար իրավունքի հի-
ման վրա:

ՀԱՐՅ 12.—Ի՞նչպե՞ս եյին տեղի ունենում մեզ մոտ խորհուրդ-
ների ընտրութիւնները բաղմաստիճան սխտեմի ժամանակ:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Աշխատավորները պատգամավորներ եյին
ընտրում ռայոնական համագումարների համար: Ռայոնական
համագումարները պատգամավորներ եյին ընտրում մարզայիննե-
րի, յերկրայինների և հանրապետականների համար (հանրապե-
տութիւններում՝ առանց մարզային բաժանման): Այս վերջին
համագումարները պատգամավորներ եյին ընտրում ԽՍՀ Միու-
թեան խորհուրդներին համագումարների համար: ՌՍՖՍՀ և ՌԽՍՀ
մեջ հանրապետական համագումարների համար պատգամավորներ
ընտրվում եյին մարզային (յերկրային) համագումարներում:
Որենսդրական բարձրագույն որդանները (ԽՍՀ Միութեան ԿԳԿ և
միութենական հանրապետութիւնների ԿԳԿ) ընտրվում եյին հա-

մապատասխանորեն ԽՍՀ Միութեան Խորհուրդների համագու-
մարում և հանրապետական համագումարներում: Այժմ պատգա-
մավորներն ընտրվում են անմիջականորեն բնակչութեան կողմից:

ՀԱՐՅ 13.—Ի՞նչո՞ւ առաջ մեզնում չկային ընդհանուր ընտրու-
թիւններ:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Այս բանը բացատրվում է մեր պետութեան այն
ժամանակվա դրութեամբ: Այն ժամանակ նախկին սպիտակ-գլար-
դիականները, կարվածատերերը, Փաբրիկանտները, պաշտամուն-
քի սպասավորները և դրանց նման տարրերը «բացահայտ պատե-
րադ» եյին մղում ժողովրդի դեմ և խորհրդային որենքների դեմ
եյին դործում: Ընտրական իրավունքից նրանց զրկող խորհրդ-
դային որենքը Խորհրդային իշխանութեան պատասխանն եր այդ
դիմադրութեանը» (Ստալին):

Ահա թե ինչով է բացատրվում այն փաստը, վոր ըստ մեր
նախկին սահմանադրութիւնների ու ընտրական որենքների ընտ-
րական իրավունքը պատկանում եր միայն աշխատավորներին:

ՀԱՐՅ 14.—Ի՞նչ կարգով եր կատարվում մեզանում քվեար-
կութիւնը ըստ նախկին ընտրական որենքների:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Այդ կարգը շատ հասարակ եր. քվեարկութիւ-
նը տեղի յեր ունենում առաջադրված թեկնածուին «թեր», «դեմ»
և «ձեռնպահ» յեղողների ձեռքերը բարձրացնելու միջոցով: Այժմ
բաց քվեարկութիւնը փոխարինված է գաղտնիով:

ՀԱՐՅ 15.—Ի՞նչ բովանդակութիւն ունի Ընտրական նոր
որենքը:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Ընտրական նոր որենքը բաղկացած է ութ գլու-
խից, վոր նվիրված են միմիայն մի հարցի—ընտրական սխտեմին:

Ընտրական նոր որենքը ամենից առաջ ընտրական սխտեմի
սկզբունքները շարադրում է այնպե՞ս, ինչպե՞ս նրանք վորոշված
են մեր Սահմանադրութեան կողմից:

Սահմանադրութեան և այդ Սահմանադրութեան հարադատ
զավակը հանդիսացող Ընտրական որենքի միջև գոյութիւն ունե-
լող ամենասերտ կապը ընդդեմու համար առաջին գլուխը մատ-
նանշում է, թե Սահմանադրութեան հատկապե՞ս վոր հոդվածների
հիման վրա յե կառուցված մեր ընտրական սխտեմը:

Դրանով հենց «Ընտրութիւնների կանոնադրութիւնը» ասում
է, վոր մեր Ընտրական որենքի աղբյուրն ու հիմունքը հանդիսա-
նում է մեր Սահմանադրութիւնը և նրա վորոշած սկզբունքները:

«Կանոնադրութեան» յերկրորդ գլուխը խոսում է ընտրողների
ցուցակների մասին:

¹ Ленин, т. XXIV, стр. 146.

² Молотов, Об изменениях в Советской конституции, стр. 29, Пар-
тиздат, 1935 г.

Յերբորդը գլուխը—Միության խորհրդի և Ազգությունների խորհրդի ընտրությունները ընտրական ուղղությունների մասին:

Զորքորդը գլուխը—ընտրական տեղամասերի մասին:

Հինգերորդը—ընտրական հանձնաժողովների մասին:

Վեցերորդը—ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավորության թեկնածուներ առաջադրելու կարգի մասին:

Յոթերորդը—քաղաքականության կարգի մասին:

Ութերորդը—ընտրությունների արդյունքների վերջման մասին:

ՀԱՐՅ 16.—Ինչո՞ւ ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը բաղկացած է յերկու պալատից—Միության խորհրդից և Ազգությունների խորհրդից:

ՊԱՏԱՍԽԱՆ.—ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը բաղկացած է յերկու պալատից այն պատճառով, վոր մեր պետութիւնը բաղմադդ է, այն պատճառով, վոր ԽՍՀՄ ազգություններն ունեն իրենց սպեցիֆիկ, առանձնահատուկ շահերը, վորոնք իրենց արտացոլումը պիտի գտնեն հատուկ գերագույն որդանի մեջ:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդում այդպիսի որդանի դեր է խաղում Ազգությունների խորհուրդը:

Մեր Սահմանադրութիւնը յենում է այն բանից, վոր «բոլոր ազգերն ու ռասաներն... անկախ նրանց ուժից ու թուլութիւնից,—պետք է ողտվեն միատեսակ իրավունքներով հասարակության տնտեսական, հասարակական, պետական ու կուլտուրական կյանքի բոլոր վոլորտներում»¹:

Ազգությունների խորհուրդը—յերկրորդ պալատը—վորեւ այլ նպատակ չի հետապնդում, վորը տարբեր լիներ առաջին պալատի—Միության խորհրդի նպատակներից: Յերկու պալատն էլ հավասարաչափ պաշտպանում են աշխատավոր մասսաների շահերը: Սակայն Ազգությունների խորհուրդը—սա մի որդան է, վոր արտացոլում է առանց բացառության բոլոր հանրապետութիւնների ու ազգությունների կարիքներն ու պահանջմունքները: Այդպիսի որդանի անհրաժեշտութիւնը թեւադրվում է ԽՍՀՄ բաղմադդ կազմով ու խորհրդային կարգի առանձնահատուկութիւններով, մի կարգ, վորն անխնա պայքար է մղում ամեն տեսակ նացիտնալիստական, չովինիստական թեքումների դեմ:

Կուսակցութիւնի XII համագումարում ընկեր Ստալինն ա-

սում էր. «Զի կարելի, ընկերներ, մեր պայմաններում, յերբ Միութիւնն ընդհանուր առմամբ միավորում է վոչ պակաս քան 140 միլիոն մարդ, վորոնցից 65 միլիոնը վոչ-ուսաներ են,—այս տեսակի մի պետութիւն մեջ չի կարելի կառավարել՝ այստեղ, Մոսկւայում, բարձրագույն մարմնում, մեր առջև չունենալով այդ ազգութիւնների պատվիրակներին, վորոնք արտացոլեցին վոչ միայն ամբողջ պրոլետարիատի համար ընդհանուր շահերը, այլև առանձին, հատուկ, սպեցիֆիկ, ազգային շահերը: Առանց սրան, ընկերներ, չի կարելի կառավարել»¹:

«ԽՍՀՄ,—ասում էր ընկեր Ստալինը խորհուրդների VIII համագումարում,—ինչպէս հայտնի յե, բաղմադդ պետութիւն է: Մեզ մոտ կա գերագույն մարմին, վորտեղ ներկայացված են ԽՍՀՄ բոլոր աշխատավորների ընդհանուր շահերը՝ անկախ նրանց ազգութիւնից: Դա—Միութիւնի խորհուրդն է: Բայց ԽՍՀՄ ազգութիւնները, բացի ընդհանուր շահերից, ունեն նաև իրենց առանձին հատուկութիւնների հետ: Կարելի՞ յե, արդյոք, արհամարհել այդ յուրահատուկ շահերը: Վո՞չ, չի կարելի: Պե՞տք է արդյոք հատուկ գերագույն մարմին, վորն արտացոլեր հենց այդ յուրահատուկ շահերը: Անպայման պետք է: Կասկած չի կարող լինել, վոր առանց այդպիսի մարմնի անհնարին կլիներ այնպիսի բաղմադդ պետութիւնը կառավարելը, ինչպիսին ԽՍՀՄ է: Այդպիսի մարմին է հանդիսանում յերկրորդ պալատը, ԽՍՀՄ Ազգութիւնների խորհուրդը»²:

Մեզ մոտ կան շատ ժողովուրդներ, որինակ՝ կարելիներ, կոմիները, կալմիկները, յակուտները, աբխազները և այլն, վորոնցից յուրաքանչյուրի քանակը 300 հազ. հոգու չի հասնում: Յեթե կատարվեցին միմիայն Միութիւնի խորհրդի ընտրութիւնները, ապա նրանցից մի քանիսը ներկայացված չեցին լինի ԽՍՀՄ Գերագույն խորհրդում: Ազգութիւնների խորհրդի ընտրութիւնները բոլոր, նույնիսկ ամենասակավաթիւ, ժողովուրդներին հնարավորութիւն են տալիս ունենալու իրենց ներկայացուցիչները ԽՍՀՄ իշխանութիւնի գերագույն որդանում:

¹ Ստալին, Մարքսիզմը և ազգային-դադութային հարցը, էջ 169, Հայկուհարատ, 1935 թ.:

² Ստալին, ԽՍՀՄ Սահմանադրութիւնի նախագծի մասին, էջ 58—59, Հայկուհարատ, 1937 թ.:

¹ Ստալին, ԽՍՀ Միութիւնի Սահմանադրութիւնի նախագծի մասին, էջ 30, Հայկուհարատ, 1937 թ.:

ՀԱՐՑ 17.—Ի՞նչ է ասում ԽՍՀՄ Ստալինյան սահմանադրութ-
յունն ընտրական սխեմայի մասին:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Ստալինյան սահմանադրությունն ընտրական
սխեմային նվիրում է հատուկ գլուխ—XI գլուխը (134—142 հոդ-
վածները):

Մեր ընտրական սխեմայի հիմքն է կազմում ընդհանուր, հա-
վասար, ուղղակի ընտրական իրավունքի սկզբունքը՝ դադանի
քվեարկությամբ:

Աշխարհի վոչ մի յերկիր, բացի ԽՍՀՄ, չգիտե իրոք ընդ-
հանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունք ու դադանի
քվեարկություն: Ճիշտ է, մի շարք բուրժուական սահմանադրու-
թյունների մեջ խոսվում է ընդհանուր, հավասար և ուղղակի
ընտրական իրավունքի մասին դադանի քվեարկությամբ, սակայն
իրականում նույնիսկ ամենաառաջավոր բուրժուական-դեմոկրա-
տական յերկիրները սխեմայատիկ կերպով խախտում են այդ
սկզբունքը ամեն տեսակ սահմանափակումների ու վերապահու-
թյունների ոգնությամբ, վորոնք սահմանում են այսպես կոչված
զանազան ցենզեր (նստակեցության, գույքային, կրթական և
այլն) կամ բնակչության վորոշ կատեգորիաների ուղղակի զրկում
են ընտրական իրավունքներից (որինակ՝ կանանց, զինվորական
ծառայողներին և այլն):

Այլ բան է մեզ մոտ: ԽՍՀՄ նոր Սահմանադրությունը և նոր
ընտրական օրենքը ապահովում են իրոք ընդհանուր ընտրական
իրավունքը, իրոք ուղղակի ու հավասար ընտրական իրավունքը և
իրոք քվեարկության դադանիքը:

Խորհուրդների VIII արտակարգ համաժողովարում այս առ-
թիվ ընկեր Ստալինն ասում էր. «ԽՍՀՄ նոր Սահմանադրության
նախագծի առանձնահատկությունն այն է, վոր նա ազատ է այդ-
պիսի վերապահումներից ու սահմանափակումներից: Նրա համար
գոյություն չունեն ակտիվ կամ պասսիվ քաղաքացիներ, նրա հա-
մար բոլոր քաղաքացիներն ակտիվ են: Նա տարբերություն չի
ընդունում տղամարդկանց ու կանանց, «նստակյացների» ու «վոչ-
նստակյացների», ունեւորների ու չունեւորների,՝ կրթվածների ու
վոչ-կրթվածների իրավունքների միջև: Նրա համար բոլոր քա-
ղաքացիներն իրենց իրավունքներով հավասար են: Վո՛չ թե գույ-
քային զրկությունը, վո՛չ թե ազգային ծագումը, վո՛չ թե սեռը,
վո՛չ թե պաշտոնական դրությունը, այլ յուրաքանչյուր քաղա-
քացու անձնական ընդունակություններն ու անձնական աշխա-

տանքն են վորոշում նրա դրուժյունը հասարակության մեջ:

Ահա թե ինչում է կայանում մեր նոր ընտրական սխեմայի ա-
ռանձնահատկությունը, մի սխեմա, վորը հենվում է ընդհանուր,
հավասար և ուղղակի ընտրական իրավունքի վրա դադանի քվե-
արկությամբ:

ՀԱՐՑ 18.—Ի՞նչ է նշանակում ընդհանուր ընտրական իրա-
վունք:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Այդ նշանակում է, վոր ընտրություններին
մասնակցում են այն բոլոր քաղաքացիները, վորոնք հասել են վո-
րոշ տարիքի, բացի խեղադարձներից և այն անձերից, վորոնք
հանցագործության համար դատարանի կողմից դատապարտված
են վորեւս պատժի՝ ընտրական իրավունքների զրկումով:

Հենց այսպես է ասում Սահմանադրության 135 հոդվածը:

Այս հոդվածում ասվում է. «Պատգամավորների ընտրու-
թյուններն ընդհանուր են. ԽՍՀՄ բոլոր քաղաքացիները, վորոնք
18 տարեկան են, անկախ ռասայական ու ազգային պատկանելու-
թյունից, դավանանքից, կրթական ցենզից, նստակեցությունից,
սոցիալական ծագումից, գույքային դրուժյունից և անցյալ գոր-
ծունեյությունից, իրավունք ունեն մասնակցելու պատգամավոր-
ների ընտրություններին և ընտրվելու, բացի խեղադարձներից և այն
անձերից, վորոնք դատարանի կողմից դատապարտված են՝ ընտ-
րական իրավունքների զրկումով»:

Ստալինյան սահմանադրության 122 հոդվածն ընդգծում է
կնոջը ԽՍՀՄ-ում տղամարդուն հավասար իրավունքներ տալը՝
տնտեսական, պետական, կուլտուրական և հասարակական-քա-
ղաքական կյանքի բոլոր բնագավառներում:

123 հոդվածն ապահովում է ԽՍՀՄ քաղաքացիների իրավա-
հավասարությունը, անկախ նրանց ազգությունից ու ռասայից,
տնտեսական, պետական, կուլտուրական ու հասարակական-քա-
ղաքական կյանքի բոլոր բնագավառներում, որենքի ամբողջ խըս-
տությամբ պատժելով իրավունքների վորեւից սահմանափակում
կամ մի շարք քաղաքացիների համար մյուսների նկատմամբ ուղ-
ղակի կամ անուղղակի առավելությունների սահմանում՝ նայելով
նրանց ռասայական պատկանելությանը, ինչպես նաև ռասայական
ու ազգային բացառիկության կամ ատելության ու արհամարհան-
քի ամեն տեսակ քարոզ:

ՀԱՐՑ 19.—Գոյություն ունե՞ն արդյոք իրականում բուրժու-
ական յերկիրներում ընդհանուր ընտրություններ:

ՊՍՏԱՍԽԱՆ. — Իրականում ընդհանուր ընտրությունն էլ բուրժուական յերկիրներում գոյութիւն չունին:

Բուրժուական վոչ մի սահմանադրութիւն, նույնիսկ ամենից «առաջադեմն» ու «դեմոկրատականը», այդպիսի իրոք ընդհանուր ընտրութիւններ չի ճանաչում:

Ֆրանսիայում, որինակ, ընտրական իրավունքներից զրկված են կանայք, զինվորական ծառայողները և բոլոր նրանք, ովքեր տվյալ վայրում 6 ամսից պակաս են ապրել (նստակեցութեան ցենզ):

Անգլիայում, ինչպես և Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Բելգիայում և կապիտալիստական մի քանի ուրիշ յերկիրներում, ընդհանուր ընտրական իրավունքը սահմանափակված է դանդաղ ցենզերով, մասնավորապես՝ նստակեցութեան ցենզով (3 ամսից մինչև 2 տարի):

Բուրժուական դիտնականները կարծում են, վոր հենց այդպես էլ պիտի լինի: Ֆրանսական մի ակնաւոր դիտնական—Փարիզի համալսարանի պրոֆեսոր Եամենը կարծում է, վոր ընտրական իրավունքից կանանց զրկելը ուղղակի բղրում է «յերկու սեռերի միջև աշխատանքի և ֆունկցիաների բաժանելուց»: Ըստ Եամենի՝ տղամարդուն բաժին են ընկել հասարակական կյանքն ու նրա հետ կապված «ֆունկցիաները», կնոջը բաժին են ընկել ընտանեկան հոգսերն ու յերեխաների դաստիարակութիւնը:

Պրոֆեսոր Եամենը ընտրական իրավունքից կանանց զրկելը պաշտպանում է նաև այն նկատաւումով, վոր կանանց ընտրական իրավունք վերապահելը կնշանակեր «նորագույն հասարակութիւնների՝ բաղմաթիվ աշխարհումներով արդեն բարդացած քաղաքական կաղմակերպութեան մեջ խռովութեան սկզբունքներ» մուծել:

Չնայելով այսպիսի դատողութիւններին ակնհայտի տնտեսութեանն ու անհեթեթութեանը, Ֆրանսական բուրժուազիան համարում են կառչում է այդ հայացքին և մինչև այժմ էլ ընտրական իրավունքներ չի տալիս կանանց:

Պարզ է վոր իրերի այսպիսի դրութեան ժամանակ ամեն տեսակ խոսակցութիւն ընդհանուր ընտրական իրավունքների մասին—խաբէրութիւն ու կեղծավորութիւն է:

ՀԱՐՅ 20. — Ինչո՞ւ բուրժուազիան իրականում ընդհանուր ընտրական իրավունք չի մտցնում:

ՊՍՏԱՍԽԱՆ. — Բուրժուազիան իրականում ընդհանուր ընտ-

րական իրավունք չի մտցնում այն պատճառով, վոր վախենում է ժողովրդական մասսաներից, բանվորներից ու դշուղացիներից, վորոնք կարող են իրենց մասնակցելն ընտրութիւններին ոգտագործել ընդդէմ բուրժուազիայի:

Այս վախը բուրժուազիային թելադրում է փառաբն, ամեն տեսակ հնարքներով ու խարդախ մեքենայութիւններին ոգնութեամբ, մասսաների ընտրական իրավունքները սահմանափակելու անհրաժեշտութիւն, չնայելով բուրժուական սահմանադրութիւններում այդ իրավունքների ձևական աղբարարմանը:

Բուրժուական միքանի դիտնականներ պատահականորեն չեն, վոր ընդունում են, թէ ընդհանուր ընտրական իրավունքը քաղաքական լեղվի մեջ լոկ պայմանական նշանակութիւն ունի, թէ իրոք այդ աշպես կոչված «ընդհանուր» ընտրական իրավունքը բոլորովին էլ ընդհանուր չէ, վորովհետեւ ըստ բուրժուական ընտրական որենքների՝ նույնիսկ «ընդհանուր» ընտրական իրավունքի դեպքում վոչ բոլոր քաղաքացիներին է թույլատրվում մասնակցել ընտրութիւններին:

Հենց այսպիսի կարգերի հետևանքով Ֆրանսիայում, որինակ, 42 միլիոն բնակչութիւնից 1934 թ. ընտրական իրավունք ունեյին միայն 11,9 միլիոն բնակչութիւն, և ընտրական իրավունքից բոլորովին զրկված էյին դաղութներ 60 միլիոն բնիկները:

Այսպես է բանը կապիտալիստական ամենատաղավոր յերկիրներից մեկում:

ՀԱՐՅ 21. — Ինչպես է ընտրութիւնների գործը ֆաշիստական յերկիրներում:

ՊՍՏԱՍԽԱՆ. — Ֆաշիստական յերկիրներում (Գերմանիա, Իտալիա, Ճապոնիա) ընտրութիւններն ընդհանրապես վեր են անվել կոմեդիայի: Այստեղ վոչ միայն «ընդհանուր», այլ վոչ մի ընտրական իրավունք գոյութիւն չունի: Այստեղ պառլամենտի պատգամավորները պարզապես նշանակվում են ֆաշիստական պարագլուխների կողմից «քվեարկութիւնը» հասցված է բոլրէտեններն այնպիսի վոստիկանական կոնտրոլի ներքո արկղիկների մեջ գցելուն, վորը վաղորդ կանխորոշում է ընտրութիւնների՝ կառավարող կլիկային հաճելի յեղքը, և վորը ծեծի, բանտարկութեան, համակենտրոնացման ճամբարի և այլն սպառնալիքի տակ է դնում ամենքին, ով կհամարձակվի քվեարկել ֆաշիստական գլիտատորի կողմից նշանակված պատգամավորների դեմ:

«Ընդհանուր, ուղղակի, հավասար և գաղտնի ընտրական

իրավունքը բուրժուական կուսակցությունների քաղաքական գլխավոր լողուններն է յեղել նրանց զարգացման լավ տարիներում: Ընտրական օրենսդրության դեմոկրատացման մեջ եր գտնում իր արտահայտությունը բուրժուակալի վստահությունն իր ուժերի աճման վրա, նրա վստահությունը՝ մասսաներն իրեն յենթարկելու բուրժուական իշխանության ընդունակության վրա, վերջինս թե այդ բանը համապատասխան է նրանց սեփական կամքին, ընտրողների կամքին:

Վերջին յերկու տասնամյակում դրությունն արմատապես փոխվեց: Նախկին վստահությունը կապիտալիստական կարգի ուժին արդեն չատերի մեջ չկա: Բուրժուական դատարարների մեջ աճում է տաղնապը վաղվան որվա համար: Այլևս վոչ վոք չի մտածում բուրժուա-դեմոկրատական իրավունքներն ու ազատությունները վոչ միայն ընդարձակելու, այլև պահպանելու մասին անգամ: Յուրաքանչյուր քայլափոխում ծաղրանքներ են թափվում «չորսպոչանու» վրա: Նույնիսկ բուրժուական դեմոկրատիային ու բուրժուական պառլամենտարիզմին անհաշտ թշնամի Փաշիգմը լայնորեն մոզա յե դառնում թե՛ բուրժուական կառավարման քաղաքականության մեջ և թե՛ պետության թեորիայի մեջ: Վո՛չ մի վստահություն ժողովրդական մասսաներին—այսպիսին է բուրժուակալի ղեկավար կլիկներին ու նրանց Փաշիստական աղենատուրայի լողունը: Բուրժուական դեմոկրատիայից ու պառլամենտարիզմից՝ դեպի կապիտալի բացահայտ տեռորիստական իշխանություն աշխատավորների վրա Փաշիստական դրոշի ներքո—այսպիսին է բուրժուական յերկիրների զարգացման ուղին վերջին ժամանակաշրջանում»¹:

Ընկ. Մուրումովը դեռևս Խորհուրդների VII համագումարում այսպես է բնութագրել դեմոկրատական պառլամենտարիզմը Փաշիգմով փոխարինող բուրժուական յերկիրների զարգացման ուղին, Փաշիգմ, վորը թքում է այն բանի վրա, ինչ վոր XIX դարում և XX դարի սկզբում համարվում էր և եր բուրժուական պետության բարձրագույն նվաճումը:

ՀԱՐՑ 22.—Ի՞նչ դեր է խաղում ընդհանուր ընտրական իրավունքը խորհրդային պայմաններում:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Ընդհանուր ընտրական իրավունքը խորհրդային իշխանության և սոցիալիզմի լիակատար հաղթության պայ-

մաններում պետութայն ղեկավարման, ժողովրդական կամքի դրսևորման, պետական զանազան օրգանների դործունեության վրա հասարակական հսկողության դործում ժողովրդական մասսաների մասնակցության ամենագորագույն միջոցներից մեկն է, բյուրոկրատների ու բյուրոկրատիզմի դեմ կռիվու կարևորագույն միջոցներից մեկը:

«Ընդհանուր, հավասար, ուղղակի ու զաղանի ընտրությունները ԽՍՀՄ-ում մի խարազան կհանդիսանան ազգաբնակչության ձեռքում՝ իշխանության վստ աշխատող օրգանների դեմ: Մեր նոր խորհրդային սահմանադրությունը, իմ կարծիքով, ամենադեմոկրատական սահմանադրությունը կլինի աշխարհում գոյություն ունեցող բոլոր սահմանադրությունների մեջ»²:

ՀԱՐՑ 23.—Ի՞նչպիսին է կոմունիստական կուսակցության վերաբերմունքը դեպի ընդհանուր ընտրական իրավունքը:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Կոմունիստական կուսակցությունը միշտ էլ կողմնակից է յեղել ընդհանուր ընտրական իրավունքին: Ընդհանուր ընտրական իրավունքի սահմանափակումը առաջ է յեկել պատմական անխուսափելի հանգամանքների շնորհիվ: Դեռևս 1919 թվին Լենինը կանխատեսել է, վոր հետու չէ այն ժամանակը, յերբ խորհրդային իշխանությունը ողտակար կհամարի մոցնել ընդհանուր ընտրական իրավունքը:

Իր «Ռի(բ)ի ծրագրի նախադիծը» աշխատության մեջ (1919 թ.) Լենինն ուղղակի գրում էր, վոր «ամենամոտ ապագայում արտաքին հարձակման դադարելը և եքսպրոպրիատորների եքսպրոպրիացիան ավարտելը կարող է, վորոչ պայմաններում, ստեղծել մի դրություն, յերբ պրոլետարական պետական իշխանությունը չահագործողների դիմադրությունը ճնշելու ուրիշ միջոցներ կընտրի և կմոցնի ընդհանուր ընտրական իրավունքը առանց վոքևս սահմանափակումների»³:

Խորհուրդների VIII արտակարգ համագումարում Սահմանադրության նախագծի մասին տված գեկուցման մեջ ընկեր Ստալինն ասաց.

«Խորհրդային իշխանությունը վոչ—աշխատավորական և չահագործող տարրերին ընտրական իրավունքներից զրկել է վո՛չ թե

¹ Ստալին, Զրույց ամերիկյան «Սկրիպս—Հոուարդ Նյուգիեյիթը» լրագրային միավորման նախագահ պարոն Ռոյ Հոուարդի հետ, էջ 34—35, Հայկուհի հրատ, 1936 թ.:

² Լենին, տ. XXIV, էջ. 94.

³ Молотов, Об изменениях в Советской конституции, стр. 33, Партиздат, 1935 г.

Համիտենդապես, այլ ժամանակավորապես, մինչև վորոշ ժամանակաշրջան»:

Ստալինյան սահմանադրութիւնն ապահովում է իրոք իսկական ընդհանուր ընտրական իրավունք:

Կապիտալիստական վոչ մի յերկրում այսպիսի ընտրական իրավունք չկա և չի կարող լինել՝ կապիտալիզմի տիրապետութեան որով:

ՀԱՐՅ 24.—Ի՞նչ է նշանակում ուղղակի ընտրական իրավունք:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Ստալինյան սահմանադրութիւնը սահմանել է ուղղակի ընտրական իրավունք, այսինքն խորհուրդներ ընտրութեան այնպիսի կարգ, վորի ժամանակ պատգամավորներն ընտրվում են հենց ընտրողների կողմից անմիջականորեն (ուղղակի):

Մինչև 1936 թ. Սահմանադրութիւնը մտցնելը այսպես ընտրվում էին միայն քաղաքային ու գյուղական խորհուրդները:

Խորհրդային իշխանութեան վերադաս որդաններն ընտրվում էին Համապատասխան Համագումարներում: Հետևանքն այն էր լինում, վոր մենք ունենում էինք յերկաստիճան ընտրութիւններ (չրջգործկոմները), յեռաստիճան ընտրութիւններ (յերկրային, մարզային գործկոմները, ինչպես նաև ավտոնոմ Հանրապետութիւնների ղեկավար որդանները, մարզեր ունեցող դաշնակից Հանրապետութիւնների կենտրոնական գործադիր կոմիտեները) և քառաստիճան ընտրութիւններ (ԽՍՀ Միութեան Կենտրոնական գործադիր կոմիտեն):

Այս սխեման անցյալում անհրաժեշտ էր և լինելն արդարացում էր իրեն, թեկուզ և ուներ վորոշ թերութիւններ:

Այս սխեմամբ պայմանավորված էր մեր անտեսութեան այն ժամանակվա դրութեամբ, քաղաքի ու գյուղի կապի ընդլայնում, ընակչութեան կուլտուրական մակարդակում, մասսաների ակտիվութեան աստիճանում: Հայտնի յե, վոր քաղաքացիական պատերազմի տարիներում և նույնիսկ հետագա մի շարք տարիների ընթացքում մեր անտեսական, կուլտուրական ու հասարակական քաղաքական դրութիւնը դժվարացնում էր վոչ-ուղղակի ընտրութիւններից ուղղակի ընտրութիւններին անցնելու գործը:

Բազմաստիճան ընտրութիւններն ունեյին իրենց թերութիւնները—ընտրողների կապն իրենց ներկայացուցիչների հետ անբավարար էր. պատգամավորի պատասխանատւութիւնն իր ընտրողների առաջ ավելի քիչ էր, վորովհետև պատգամավորն ընտ-

րողից բաժանված էր նրանց միջև յեղած որդաններով. ընտրողը քիչ էր ճանաչում իր պատգամավորին և ավելի քիչ կարող էր կոնտրոլի յենթարկել նրա գործունեյութիւնը:

Ուղղակի ընտրութիւնները վերացնում են այս թերութիւնները:

ՀԱՐՅ 25.—Ինչո՞ւ են ուղղակի ընտրութիւններ չառնվել ընտրութիւնները:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Ուղղակի ընտրութիւնների առավելութիւնների մասին ընկեր Մոլոտովն այսպես է ասում.

«Ուղղակի ընտրութիւններն ե՛լ ավելի կբարձրացնեն խորհրդային իշխանութեան որդանների հեղինակութիւնը և ե՛լ ավելի կուժեղացնեն այս որդանների կապը աշխատավորների լայն մասսաների հետ: Բանավորներն ու գյուղացիներն ավելի լավ կճանաչեն իրենց ներկայացուցիչներին վո՛չ միայն շրջանում ու մարզում, այլև խորհրդային պետութեան կենտրոնական որդաններում, նրանց հետ ե՛լ ավելի անմիջականորեն կապված կլինեն, և հենց դրանով պիտի բարձրանա խորհրդային իշխանութեան դեկավար որդանների աշխատանքը ե՛լ ավելի բարձր աստիճանի վրա»¹:

Յեւ իրոք: ԽՍՀ Միութեան Կենտրոնական գործադիր կոմիտեյի անդամներն առաջ ընտրվում էին հետևյալ կերպով. սկզբում ընտրողներն ընտրում էին շրջանային, քաղաքային ու գյուղական խորհուրդներ (առաջին աստիճանը). հետո շրջանային, քաղաքային ու գյուղական խորհուրդները պատգամավորներ էյին ընտրում խորհուրդների յերկրային ու մարզային Համագումարների համար և ավտոնոմ Հանրապետութիւնների ու մարզերի խորհուրդների համագումարները համար (յերկրորդ աստիճանը). խորհուրդների հանրապետական, մարզային ու յերկրային համագումարները, ավտոնոմ Հանրապետութիւնների ու մարզերի խորհուրդների համագումարներն ընտրում էին պատգամավորներ ԽՍՀ խորհուրդների համագումարի համար (յերրորդ աստիճանը). խորհուրդների համագումարն ընտրում էր ԽՍՀ Կենտրոնական գործադիր կոմիտե (չորրորդ աստիճանը): Այսպիսով, ընտրութիւնները բազմաստիճան էին: Միանգամայն հասկանալի յե, վոր ԽՍՀ ԿԳԿ-ի անդամների և սկզբնական ընտրողների մի-

¹ Молотов, Об изменениях в Советской конституции, стр. 28, Партиздат, 1936 г.

Չէ կապը աշխարհի սխտեմի ժամանակ չեր կարող բախարար չա-
փով սերտ և կենդանի լինել:

Ուրիշ բան և ուղղակի ընտրությունների ժամանակ: Ըստ
Ստալինյան սահմանադրութեան՝ Գերագույն Խորհուրդը կընտրվի
անմիջականորեն ընտրողների կողմից: Ուղածդ գյուղում, կոլ-
տնտեսությունում, խորհատեսությունում, ուղածդ ամենա-
փոքրիկ քաղաքում ընտրողները ձայն կտան վոչ թե պատվիրակ-
ներին, վորոնք պետք և պատգամավորներ ընտրելին, այլ ուղղակի
հենց պատգամավորներին:

Յուրաքանչյուր ընտրող, վոր ապրում է ընտրական ոկրու-
գում, պետք է ձայն տա առաջադրված թեկնածուներից մեկին:
Յեթե թեկնածուներից մեկին ստանա ձայների բացարձակ մեծա-
մասնություն (այսինքն՝ բոլոր տրված ձայների կեսից ավելին),
ապա հենց նա էլ ընտրված կլինի:

ՀԱՐՑ 26.—Ի՞նչ է նշանակում հավասար ընտրական իրա-
վունք:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Հավասար ընտրական իրավունք նշանակում է,
վոր յուրաքանչյուր ընտրող ընտրությունների ժամանակ մնացած
բոլոր ընտրողների հետ հավասար ձայն ունի, վոր յուրաքանչյուր
ընտրող մեկ ձայն ունի, վոր բոլոր քաղաքացիներն ընտրություն-
ներին մասնակցում են հավասար հիմունքներով և վոր, հետևա-
պես, վոչ մի ընտրող մի այլ ընտրողի նկատմամբ վոչ մի առա-
վելություն չունի:

ՀԱՐՑ 27.—Իրոք գոյություն ունի՞ արդյոք կապիտալիստա-
կան յերկիրներում հավասար ընտրական իրավունք:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Մի քանի բուրժուական սահմանադրություն-
ներ էլ աղարարում են հավասար ընտրական իրավունք, սակայն
իրոք հավասար ընտրական իրավունք այդ պետություններում
չկա:

Անգլիայում միեւնույն քաղաքացին, վոր հողային սեփակա-
նություն ունի տարբեր կոմսություններում, ձայնի իրավունք ու-
նի մի քանի ընտրական ոկրուգներում: Ստացվում է, վոր մի շարք
ընտրողներ ունեն մի ձայն, մյուսները՝ յերկու և ավելի: Քվեար-
կության այսպիսի սխտեմը (բազմաքվեությունը) ակնհայտորեն
անարդարացի չէ, ստեղծված հոգուտ հարուստ սեփականատերե-
րի և ուղղված է ընդդեմ աշխատավորների:

Բուրժուական սահմանադրություններում գոյություն ունե-
ցող հավասարության առթիվ Լենինը գրում էր.

«Սահմանադրութեան մեջ (բուրժուական.—Ա.Վ.) գրվում
էր աղատութեան մասին, հավասարութեան մասին: Գա ստալին
է: Քանի կան աշխատավորներ, սեփականատերերն ընդունակ են
և նույնիսկ ստիպված են, վորպես սեփականատերեր, չարաչա-
հություն անել: Մենք ասում ենք, վոր հավասարություն չկա,
կուշտը հավասար չէ քաղցածին և վոչ էլ սպեկուլանտը՝ աշխա-
տավորին... Այդ հավասարությունը (բուրժուական.—Ա.Վ.)
կապիտալիստական դասակարգին պետութեան մեջ տիրող դիրք էր
ընձեռում»:

Իսկական հավասարություն հնարավոր է միայն կոմունիզմի
ժամանակ, և դեպի այդ հավասարությունը տանող ուղին անցնում
է բանվորների ու գյուղացիների սոցիալիստական պետութեան մի-
ջով, վորը իր Սահմանադրութեան մեջ վոչ միայն աղարարել է,
այլև լիովին ապահովել է քաղաքացիների իրավունքների հավա-
սարությունը և մասնավորապես իրավունքների հավասարությու-
նը ընտրական սխտեմով:

ՀԱՐՑ 28.—Ինչո՞ւ է արտահայտվում ընտրական իրա-
վունքների հավասարությունը մեր նոր Ընտրական օրենքում:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Այդ հավասարությունն արտահայտվում է
ներանում, վոր, որինակ, Միութեան Խորհրդի ընտրությունների
ժամանակ բնակչութեան յուրաքանչյուր 300 հազ. հոգուց ըն-
տրվում է մեկ պատգամավոր: Ըստ մեր Ընտրական օրենքի՝
Միութեան Խորհրդի ընտրություններում բոլոր ոկրուգները հա-
վասար են, և վոչ մեկը չի կարող Միութեան Խորհուրդ ուղարկել
ավելի պատգամավոր, քան մյուսը:

Ստալինյան սահմանադրութեան XI գլուխը, վոր նվիրված է
ընտրական սխտեմին, յեղնելով հավասարութեան սկզբունքի աղ-
ղարարումից, հատկապես վերապահություն է անում, վոր Միու-
թեան Գերագույն Խորհրդի պատգամավորների, ինչպես նաև բու-
րոր խորհուրդների՝ աշխատավորների պատգամավորների ընտ-
րությունները հավասար են, այսինքն՝ յուրաքանչյուր քաղաքացի
ունի մեկ ձայն և բոլոր քաղաքացիներն ընտրություններին մաս-
նակցում են հավասար հիմունքներով (հոդված 136), վոր կա-
նայք ընտրելու և ընտրվելու իրավունքից ոգտվում են տղա-
մարդկանց հետ հավասարապես (հոդված 137) և վոր Կարմիր
Բանակի շարքերում դառնող քաղաքացիները նույնպես ընտրելու և
ընտրվելու իրավունքից ոգտվում են բոլոր քաղաքացիների հետ
հավասարապես (հոդված 138):

Հավասարութեան սկզբունքն աստիճանաբար ե «ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրութիւններէ կանոնադրութեան» 3, 4 և 5 հոդվածներով՝ Սահմանադրութեան վերը մասնանշված հոդվածներէ համապատասխան: Մեզ մոտ չի կարող լինել այնպիսի դրութիւն, վերաբերելով կա մի շարք կապիտալիստական յերկիրներում, վերաբերելով հաճախ ընտրական մի ուրիշ ընտրողի քաղաքական տեսակարար կշիռը տասնյակ անգամ ավելի քիչ է լինում, քան մի այլ ընտրական ուրիշ ընտրողի տեսակարար կշիռը: Յրանախարար, որինով Մարտի 500 հազ. բնակչից պատգամավորներէ պարտաւոր է ուղարկում 24 պատգամավոր, մինչդեռ միւսն ուրիշ ղեկարարութեամբ 17 մանր բնակատեղիներ 30 հազ. բնակչութիւնից ուղարկում են նույնպէս 24 պատգամավոր: Սակայն յում հետ ընկած մի ղեկարարութեամբ, վեր ընդամենն ունի 245 հազ. բնակչի, ընտրում է 3 սենատոր, մինչդեռ 4½ միլիոն բնակչի ունեցող Սենայի ղեկարարութեամբ ընտրում է 10 սենատոր:

Նույնպիսի «ընտրական աշխարհադրութիւն» նկատուում է նաև ուրիշ կապիտալիստական յերկիրներում: Լեհաստանում Կրակովի ուրիշ 48 հազ. ընտրողներից ուղարկում է 1 պատգամավոր, իսկ Կլոպենեցկի ուրիշ, ուրիշական ղեկարարութեամբ ընտրութեամբ, 96 հազ. ընտրողներից ուղարկում է 1 պատգամավոր:

Շնորհիվ ընտրական ուրիշների անհավասարութեան՝ Փարիզի բուրժուական 6-րդ ուրիշի առաջին տեղամասը 8 հազ. ընտրողներից ուղարկում է 1 պատգամավոր. Փարիզի պրոլետարական արմարձանում գտնվող Կորբէյ ուրիշի յերկրորդ տեղամասը 50 հազ. ընտրողներից ուղարկում է նույնպէս մեկ պատգամավոր:

Խորհրդային ընտրական սխտեմը, վեր հաստատված է «ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրութիւնների կանոնադրութեամբ», աստիճանաբար է ընտրողների իսկական հավասարութիւնը, աստիճանաբար է իրոք հավասար ընտրական իրավունքը: Այս բանն արտահայտուում է ամենից առաջ նրանում, վեր ԽՍՀՄ Սահմանադրութեան 34 հոդվ. հիման վրա Միութեան Խորհուրդն ընտրվում է ԽՍՀՄ քաղաքացիների կողմից ըստ ընտրական ուրիշների, ըստ վերում բոլոր ընտրական ուրիշներն իրար հավասար են. յուրաքանչյուր ընտրական ուրիշ կազմվում է՝ 300 հազար բնակչութիւնից մի ուրիշ սկզբունքով, և յուրաքանչյուր ընտրական ուրիշ Միութեան Խորհուրդ է ուղարկում միայն մեկ պատգամավոր:

Ընտրողները նույնպէս ոգտվում են հավասար իրավունքներով՝ անկախ իրենց սոցիալական ծագումից, դուքային դրութիւնից և դրամունքի տեսակից: Բանվորները, դուքացիները, ծառայողներն ու ինտելիգենցիան ընտրութիւններին մասնակցում են հավասար հիմունքներով:

Հավասար ընտրական իրավունքը նշանակում է խորհրդային ղեկարարութեամբ ղեկի առաջ կատարված ևս մի աներկալ քայլ, նշանակում է խորհրդային ղեկարարութեան հետագա և առավել հետեւողական զարգացում:

Վերջին 12 տարվա ընթացքում անցած ժամանակամիջոցում ԽՍՀՄ-ում հասարակական հարաբերութիւնների մեջ խոշոր փոփոխութիւններ տեղի ունեցան: Այժմ մեղանում մեր խորհրդային դուքացիութիւնն իր ճնշող մեծամասնութեամբ կոլտեստային դուքացիութիւն է, վեր «իր աշխատանքն ու իր ստացվածքը հիմնում է վրձ թե անհատական աշխատանքի ու հետամնաց տեխնիկայի վրա, այլ կոլեկտիվ աշխատանքի և արդի տեխնիկայի վրա» (Ստալին), վեր տնտեսութեան հիմքում գտնվում է վրձ թե մասնավոր սեփականութիւնը, այլ «կոլեկտիվ սեփականութիւնը, վերն աճել է կոլեկտիվ աշխատանքի բազայի վրա» (Ստալին): Այժմ արդեն անհրաժեշտ է պահպանել ընտրական սխտեմի մեջ վրմանց ունեցած առավելութիւնները մյուսների նկատմամբ: Այժմ հարկավոր և ոգտակար է վրձ-հավասար ընտրութիւններից անցնել հավասար ընտրութիւնների, ինչպէս այդ արել է մեծ Ստալինյան սահմանադրութիւնը:

ՀԱՐՅ 29.—Ինչո՞ւ է արտահայտվում ընտրական իրավունքի հավասարութիւնը Աղգութիւնների Խորհրդի ընտրութիւնների ժամանակ:

ՊՍՏՍՍՍՆ.—Ընտրական իրավունքի հավասարութիւնն Աղգութիւնների Խորհրդի ընտրութիւնների ժամանակ իր արտահայտութիւնը գտնում է այն բանի մեջ, վեր Աղգութիւնների Խորհրդի համար քաղաքացիները հավասար հիմունքներով ընտրում են 25-ական պատգամավոր յուրաքանչյուր միութեանական հանրապետութիւնից, 11-ական պատգամավոր՝ յուրաքանչյուր ամտոնում հանրապետութիւնից, 5-ական պատգամավոր՝ յուրաքանչյուր ամտոնում մարդից և 1-ական պատգամավոր՝ յուրաքանչյուր աղգային ուրիշից:

Սրան համապատասխան՝ յուրաքանչյուր միութեանական հանրապետութիւն անկախ իր մեծութիւնից ու բնակչութեան քա-

նակից բաժանվում է 25 ոկրուզի, յուրաքանչյուր ավտոնոմ հան-
րապետութիւն՝ 11 ոկրուզի, յուրաքանչյուր ավտոնոմ մարզ՝ 5
ոկրուզի՝ յուրաքանչյուր ազգային ոկրուզ կազմում է մեկ ընտ-
րական ոկրուզ:

Ազգութիւնների խորհրդի ընտրութիւնների սխաեմը, վոր
ընդունված է մեր «ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ընտրութիւնների
կանոնադրութեամբ», լիովին համապատասխանում է լենինյան
ստալինյան ազգային քաղաքականութեան մեծ սկզբունքներին, մի
քաղաքականութիւն, վորն ապահովում է հզոր տնտեսական, քա-
ղաքական ու կուլտուրական աճը ԽՍՀՄ բոլոր բազմաթիւ ազ-
գութիւնների, վորոնք միավորված են բանվորների ու գյուղա-
ցիների միասնական, յեղբայրական, բազմազգ սոցիալիստական
պետութեան մեջ:

ՀԱՐՑ 30.—Ի՞նչ է նշանակում գաղտնի քվեարկութիւն:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Գաղտնի քվեարկութիւնը—դա քվեարկութեան
մի այնպիսի կարգ կամ ձև է, վորի ժամանակ քվեարկութիւնը
կատարվում է վորչ թե մյուս ընտրողների աչքի առջև ձեռքերը
բարձրացնելու միջոցով, ինչպես այդ տեղի յե ունենում բաց ընտ-
րութիւնների դեպքում, այլ մյուս ընտրողների և ընդհանրապես
կողմնակի մարդկանց բացակայութեամբ ընտրական բյուլետեն-
ները լրացնելու միջոցով:

Քվեարկութեան այսպիսի կարգն ամենից ավելի յե ապահո-
վում ընտրողի ազատութիւնն ու կամքի արտահայտութեան ան-
կախութիւնը: Կողմնակի մարդկանց բացակայութեան դեպքում
ընտրողն իր կամքն արտահայտելու մեջ իրեն ավելի ազատ կզգա:
Նա իր գործողութիւնների մեջ ավելի քիչ ճնշված և ավելի քիչ
կաշկանդված կլինի: Այսպիսի քվեարկութեան դեպքում նրան վորչ
մի անախորժութիւն չի սպառնա չընտրված և դրանով իսկ վի-
րավորված բյուրոկրատների կողմից:

Մյուս կողմից, քիակ ընտրութիւնները, լինելով քննադատու-
թեան ու ինքնաքննադատութեան շատ լուրջ միջոցներից մեկը,
լինելով ցածից վերահսկողութեան յենթարկելու լուրջ միջոց,
հարկադրում են ժողովրդի կողմից ընտրված յուրաքանչյուր
պատգամավորի ավելի հաշիւ առնել հասարակական կարծիքը,
ավելի լայլ աշխատել և բարեխղճորեն վերաբերվել դեպի իր գոր-
ծը, դեպի իր պետական պարտականութիւնները:

Մեզանում բաց ընտրութիւններից քիակ ընտրութիւններին
այսինքն գաղտնի քվեարկութեանն անցնելը նշանակում է պրոլե-

տարական սոցիալիստական դեմոկրատիզմի աճում Խորհրդային
Միութեան մեջ և, ինչպես ասել է ընկ. Մոլոտովը, խորհրդային
իշխանութեան ձգտումը իր որդանների աշխատանքը դնելու բան-
վորների ու գյուղացիների ուժեղ կոնտրոլի տակ:

Գաղտնի քվեարկութիւնը—դա խորհրդային դեմոկրատիզմի
մեծագույն նվաճումն է: Դրա համար էլ «Ընտրութիւնների կա-
նոնադրութիւնը» հատկապես կանգ է առնում այդ հարցի վրա,
VII գլխում մատնանշելով այն կանոնները, վորոնց կիրառումն ա-
պահովում ու յերաշխայնորում է գաղտնի քվեարկութեան իրակա-
նացումը:

Գ Լ Ո Ի Ն II

ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ

ՀԱՐՑ 31.—Ի՞նչպես են կազմվում ընտրական ցուցակները:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Ընտրական ցուցակներ կազմելը, այսինքն՝ այն
ցուցակները, վորոնց մեջ են մուծվում ընտրութիւններին մաս-
նակցելու (ընտրելու և ընտրվելու) իրավունք ունեցող բոլոր քա-
ղաքացիները,—վերին աստիճանի կարեւոր ու պատասխանատու
աշխատանք է:

Վոր վոր չի կարող մասնակցել քվեարկութեանը, յեթե չստա-
նա սահմանված ձևի ընտրական բյուլետեններ ու ծրար: Իսկ ընտ-
րական բյուլետեններ կարող է ստանալ միայն նա, ով նախորդ
մուծված կլինի իր ընտրական տեղամասի ընտրողների ցուցակի
մեջ:

Հենց միայն այս հանգամանքը բաւական համոզիչ կերպով
խոսում է այն մասին, թե ինչպիսի նշանակութիւն ունի ընտրող-
ների ցուցակները կանոնավոր կազմելը և թե, հետևապես, ինչ-
պիսի խնամքով ու բարեխղճորեն պետք է կատարել այդ աշխա-
տանքը:

Ըստ «Ընտրութիւնների կանոնադրութեան» ընտրողների
ցուցակները կազմվում են քաղաքներում՝ աշխատավորների պատ-
գամավորների քաղաքային խորհրդի կողմից. ռայոնական բաժա-
նում ունեցող քաղաքներում՝ ռայոնական խորհրդի կողմից. գյու-
ղական վայրերում՝ աշխատավորների պատգամավորների գյու-
ղական (ստանիցայի, գյուղի, խուտորի, դչադի, աուլի) խորհրդի
կողմից (հոգւած 7):

Վորովհետև Գերագույն Խորհրդի, ինչպես նաև աշխատավոր-
ների բոլոր խորհուրդների, ընտրություններն ընդհանրապես պի-
տի տեղի ունենան ընդհանուր ընտրական իրավունքի հիման վրա,
ապա ընտրողների ցուցակների մեջ պետք է մտցվեն ընտրություն-
ների որը 18 տարին լրացրած այն բոլոր քաղաքացիները, վորոնք
ունեն ընտրական իրավունք և ցուցակները կազմելու մոմենտին
բնակվում են (մշտապես կամ ժամանակավորապես) տվյալ խոր-
հրդի տերիտորիայում, բացի այն անձերից, վորոնք մատ-
նանչված են «Կանոնադրության» 9-րդ հոդվածում, այսինքն՝ բա-
ցի դատական վճռով ընտրական իրավունքներից զրկվածներից ու
խեղադարձներից:

ՀԱՐՅ 32.—Ի՞նչ փաստաթղթերի հիման վրա պետք է քա-
ղաքացիները խորհուրդների կողմից մտցվեն ընտրողների ցու-
ցակների մեջ:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Ընտրողների ցուցակների մեջ մտցնելու հա-
մար խորհուրդները քաղաքացիներից վոչ մի փաստաթուղթ պա-
հանջել չեն կարող: Խորհուրդները պարտավոր են իրենք կազմել
այդ ցուցակները՝ տնային գրքերի, կոլտնտեսությունների ան-
դամների ցուցակների և գյուղական ծխային գրքերի հիման վրա,
կամ համապատասխան ընտրական տեղամասի բնակչությանն այ-
ցելելու միջոցով:

ՀԱՐՅ 33.—Ո՞վ չի կարող մտցվել ընտրողների ցուցակների
մեջ:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Ընտրողների ցուցակների մեջ չեն մտցվում այն
անձերը, վորոնք դատական վճռով ընտրական իրավունքներից
զրկված են, և վորոնք որենքով սահմանված կարգով ճանաչված
են իբրև խեղադարձներ:

ՀԱՐՅ 34.—Աշխատավորների պատգամավորների խորհուրդ-
ներն ինչո՞վ պիտի ղեկավարվեն՝ հրաժարվելով ընտրողների ցու-
ցակների մեջ մտցնելու այս կամ այն քաղաքացուն՝ վորպես ընտ-
րական իրավունքներից զրկվածի:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Նրանք պիտի ղեկավարվեն միանգամայն հա-
վաստի և բացարձակորեն ստուգված տվյալներով,—դատավճռի
պատճենով, այս կամ այն հիմնարկության, դատախազության
կամ դատարանի որդանների պաշտոնական հաղորդագրությամբ:
Այս առթիվ մասնավոր անձերի լոկ միայն անհիմն հայտարարու-
թյունները բավական չեն:

ՀԱՐՅ 35.—Ինչո՞վ պիտի ղեկավարվեն խորհուրդները՝ հրա-

ժարվելով ընտրողների ցուցակների մեջ մտցնելու այս կամ այն
քաղաքացիներին՝ վորպես խեղադարձներ:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Նրանք պիտի ղեկավարվեն համապատասխան
բժշկական հաստատությունների (հոգեբուժական հիվանդանոց-
ներ, հատուկ բժշկական հանձնաժողովներ և այլն) կողմից տըր-
ված բժշկական վկայականներով, հաստատությունների, վորոնք
գործում են որենքով նրանց վերապահված հատուկ լիազորու-
թյունների հիման վրա:

ՀԱՐՅ 36.—Պե՞տք է արդյոք ընտրողների ցուցակի մեջ
մտցնել այն քաղաքացիներին, վորոնք դատարանով դատապարտ-
ված են վորևե սրտոթի, վոր կապված չի ազատությունից զըր-
կելու հետ, և զրկված չեն ընտրական իրավունքից:

ՊԱՏԱՍԽԱՆ.—«Կանոնադրության» 8 և 9 հոդվածներին հա-
մապատասխան՝ այդպիսի քաղաքացիները պետք է մտցվեն ընտ-
րական ցուցակների մեջ: Ընտրողների ցուցակների մեջ չպետք է
մտցվեն այն քաղաքացիները, վորոնք դատարանով դատապարտ-
ված են առանց ընտրական իրավունքից զրկելու, միմիայն այն
դեպքում, յեթե նրանք գտնվում են կալանքի տակ, վորովհետև,
գտնվելով կալանքի տակ, նրանք փաստորեն չեն կարողանա մաս-
նակցել ընտրություններին:

ՀԱՐՅ 37.—Պե՞տք է արդյոք ընտրողների ցուցակների մեջ
մտցվեն այն անձերը, վորոնք վարչական կարգով յենթարկվել են
վորևե ռեպրեսիայի:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Այդպիսի անձերն ըստ Սահմանադրության
ընտրական իրավունքներից զրկված չեն: Քանի վոր այդ այդպես
է և քանի վոր նրանք կգտնվեն ազատության մեջ, նրանք պետք է
է մտցվեն ընտրողների ցուցակների մեջ ընդհանուր հիմունքնե-
րով:

ՀԱՐՅ 38.—Ի՞նչպես և վո՞րտեղ պետք է ընտրողների ցու-
ցակների մեջ մտցվեն թափառական ժողովուրդները (որինակ՝
զնչուները):

ՊԱՏԱՍԽԱՆ.—Նրանք բոլոր քաղաքացիների հետ միասին
ընդհանուր հիմունքներով կմտցվեն ընտրողների ցուցակների մեջ
աշխատավորների պատգամավորների այն Խորհրդի կողմից,
վորի տերիտորիայի վրա նրանք կգտնվեն այդ ցուցակները կազ-
մելու մոմենտին:

ՀԱՐՅ 39.—Կարո՞ղ է արդյոք ընտրողը մտցվել մի քանի ընտ-
րական ցուցակների մեջ:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Վո՛չ, չի կարող: «Կանոնադրութեան» 11-րդ հոդվածը սահմանում է, վոր ընտրողներից վոչ վոք չի կարող մտցվել մեկից ավելի ընտրական ցուցակի մեջ:

ՀԱՐՅ 40.—Ի՞նչպես են կազմվում այն ընտրողների ցուցակները, վորոնք դառնում են զինվորական մասերում և զորական միավորումներում:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Այն ընտրողների ցուցակները, վորոնք դառնում են զինվորական մասերում և զորական միավորումներում, կազմվում են հրամանատարութեան կողմից, հրամանատարի և զինվորական կոմիսարի ստորագրութեան ներքո:

ՀԱՐՅ 41.—Ի՞նչ ցուցակների մեջ են մտցվում մյուս բոլոր զինվորական ծառայողները, այսինքն՝ դանադան զինվորական հիմնարկութեան ներքո, որինակ՝ Պաշտպանութեան ժողկոմատի ծառայողները:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Համաձայն «Կանոնադրութեան» 12-րդ հոդվածի՝ Պաշտպանութեան ժողկոմատի և ընդհանրապես դանադան զինվորական հիմնարկութեան ներքո ծառայողները կմտցվեն ընտրողների ընդհանուր ցուցակների մեջ, վորոնք կազմվում են խորհուրդների կողմից ըստ բնակութեան վայրի, և կքվեարկեն նույնպես ըստ իրենց բնակութեան վայրի:

ՀԱՐՅ 42.—Կիրվե՞ն արդյոք ընտրողների ցուցակներն ընդհանուր զինութեանը: Յեթե այո, ապա ի՞նչ կարգով:

ՊԱՏԱՍԽԱՆ.—«Ընտրութեան ներքո կանոնադրութեան» խորհուրդներին պարտավորեցնում է ընտրողների ցուցակներն ընտրութեան ներքո 30 որ առաջ կախել ընդհանուր զինութեան համար կամ ընտրողների համար հնարավորութեան ապահովել այդ ցուցակների հետ ծանոթանալու խորհրդի շնորհով:

ՀԱՐՅ 43.—Ի՞նչ նշանակութեան ունի ընտրողների ցուցակներին նախապես ծանոթանալու համար քաղաքացիներին հնարավորութեան տալը:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Այդ բանն ամենից առաջ նշանակութեան ունի ցուցակների մեջ թույլատրված սխալները ժամանակին հայտնաբերելու հնարավորութեան տեսակետից: Ընտրողների ցուցակներին այդ ձևով ծանոթանալը թույլ կտա վերացնելու ընտրողների ցուցակից այն քաղաքացիներին սխալմամբ դուրս հանելը, վորոնք ընտրական իրավունք ունեն, կամ ուղղելու ցուցակի մեջ յեղած վորևէ այլ անճշտութեան (աղբյուր, անվան և հայրանվան ա-

ղբյուրում և այլն), ինչպես նաև հայտաբերելու նրանց, ովքեր ցուցակների մեջ են ընկել սխալմամբ կամ ուղղակի հարարկութեան հետևանքով:

ՀԱՐՅ 44.—Ընտրողների ցուցակներն ուղղելու ի՞նչպիսի կարգ է սահմանված:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Կարգը շատ հասարակ է: Ընտրողների ցուցակի մեջ նկատված անճշտութեան ներքո—ցուցակի մեջ չմտցնելը, ցուցակից հանելը, աղբյուր, անվան, հայրանվան աղավաղելը, ընտրական իրավունք չունեցող անձերին սխալ կերպով ցուցակի մեջ մտցնելը—ուղղելու համար այդ մասին պետք է հայտարարութեան տալ աշխատավորների պատգամավորների այն խորհրդին, վորը հրապարակել է ցուցակները:

ՀԱՐՅ 45.—Ո՞վ իրավունք ունի հայտարարութեան տալու ընտրողների ցուցակի մեջ յեղած անճշտութեան ներքո մասին:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Յուրաքանչյուր քաղաքացի:

Խորհուրդը պարտավոր է այդպիսի հայտարարութեանը յեղել որևէ ընթացքում քննութեան առնել և կա՛մ անհրաժեշտ ուղղումներ մտցնել ցուցակի մեջ, կա՛մ պատճառաբանված կերպով մերժել հայտարարութեանը (հոդված 18):

ՀԱՐՅ 46.—Կարելի՞ չէ արդյոք բողոքարկել խորհրդի վորոշումը՝ ընտրական ցուցակների մեջ մտցնելու հարցի առթիվ:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Կարելի չէ: Դրա համար պետք է բողոք ներկայացնել ժողովրդական դատարանին: Ժողովրդական դատարանը պարտավոր է յերեք որևէ ընթացքում դատական դո՛ւրաց նիստում, հրավիրելով կողմերին, այսինքն՝ խորհրդի ներկայացուցչին և բողոքարկողին, քննութեան առնել այդ բողոքը: Ժողովրդական դատարանն իր վճիռը պարտավոր է անհապաղ հայտնել խորհրդին և բողոքողին:

Ժողովրդական դատարանի վճիռը վերջնական է և հետագա բողոքարկման յենթակա չէ («ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրութեան ներքո կանոնադրութեան» հոդված 19):

Վերը շարադրվածը վկայում է այն մասին, վոր ընտրական ցուցակներ կազմելու սխալմամբ, վոր ընդունել է մեր Սահմանադրութեանը, աչքի չէ ընկնում վերին աստիճանի պարզութեամբ և ղեմնկրատականութեամբ և լիովին ապահովում է ամեն տեսակի սխալներից ու խեղաթյուրումներից:

ՀԱՐՅ 47.—Ի՞նչպես կլինի այն ընտրողների հարցը, վորոնք

իրենց բնակության վայրը փոխել են ընտրողների ցուցակները հրապարակելուց հետո :

ՊԱՏԱՍԽԱՆ.—Այն ընտրողը, վորն իր բնակության վայրը փոխել է ընտրողների ցուցակի հրապարակման և ընտրութիւններէ որով միջև ընկնող ժամանակամիջոցում, ընտրողների ցուցակի մեջ կմտցվի ըստ իր բնակության նոր վայրի :

Դրա համար այդպիսի ընտրողը պետք է նախկին բնակության վայրի աշխատավորների պատգամավորներէ խորհրդից հատուկ վկայական ստանա—«քվեարկութեան իրավունքի վկայական» և այդ վկայականն իր ինքնութիւնը հաստատող վկայականի հետ միասին ներկայացնի նոր բնակավայրի խորհրդին :

Կատարելով այս պահանջները, իր բնակության վայրը փոխող ընտրողը մտցվում է այն ընտրողների ցուցակի մեջ, վորոնք քվեարկում են ըստ «քվեարկութեան իրավունքի վկայականի», և ընտրութիւններին մասնակցում է ընդհանուր հիմունքներով :

ՀԱՐՑ 48.—Ի՞նչպէս պիտի քվեարկեն այն ընտրողները, վորոնք նոր վայր են յեկել ընտրութիւններէ որը :

ՊԱՏԱՍԽԱՆ.—Այն ընտրողը, վորը նոր վայր է յեկել ընտրութիւններէ որը, կարող է ներկայանալ ուղղակի ընտրական տեղամաս իր «քվեարկութեան իրավունքի վկայականով» : Այստեղ նա կմտցվի այն ընտրողների հատուկ ցուցակի մեջ, վորոնք քվեարկում են այդպիսի «վկայականներով», և քվեարկի միւս ընտրողների հետ համահավասար կերպով :

Գ Լ ՈՒ Խ III

ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՅԵՎ ԱԶԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՈԿՐՈՒԳՆԵՐԸ

ՀԱՐՑ 49.—Ի՞նչպէս են կառուցված մեզնում Միութեան Խորհրդի ընտրութիւնների ընտրական ոկրուգները :

ՊԱՏԱՍԽԱՆ.—Միութեան Խորհրդի ընտրութիւնների մեր ընտրական ոկրուգները կառուցված են ըստ տեքիտորիալ սկզբունքի : ԽՍՀՄ ամբողջ տեքիտորիան բաժանվում է ոկրուգների այս սկզբունքով . 300 հազար բնակիչ՝ յուրաքանչյուր ոկրուգին :

Հետեապէս, ԽՍՀՄ-ում այնքան ընտրական ոկրուգ կլինի, վորքան վոր կստացվի ԽՍՀՄ-ի բնակիչներէ ամբողջ քանակը 300 : հազարի վրա բաժանելուց : Յեթե յեկնելու լինենք ԽՍՀՄ բնակչութեան ներկայիս քանակից, ապա այդպիսի ոկրուգներ պետք է լինեն 570 :

Ոկրուգների վերջնական քանակը կվորոշվի ընտրութիւնների որը նշանակելու հետ միաժամանակ :

ՀԱՐՑ 50.—Ի՞նչպէս կկառուցվեն մեզնում Ազգութիւնների Խորհրդի ընտրութիւնների ընտրական ոկրուգները :

ՊԱՏԱՍԽԱՆ.—Միութեան յուրաքանչյուր հանրապետութեան մեջ, անկախ նրա բնակչութեան քանակից, նրա տնտեսական ու կուլտուրական զարգացումից, կկազմվեն 25-ական ոկրուգ : Վորովհետեւ մենք 11 միութեան հանրապետութիւն ունենք, ապա և այդպիսի ոկրուգներ կլինեն 275 :

Յուրաքանչյուր ավտոնոմ հանրապետութիւնից՝ 11 ոկրուգ, հետեապէս 22 ավտոնոմ հանրապետութիւնից՝ ընդամենը 242 ոկրուգ :

Յուրաքանչյուր ավտոնոմ մարզից՝ 5 ոկրուգ, հետեապէս 9 ավտոնոմ մարզից՝ ընդամենը 45 ոկրուգ : Յուրաքանչյուր ազգային ոկրուգում՝ 1 ընտրական ոկրուգ, հետեապէս 12 ազգային ոկրուգում՝ ընդամենը 12 ընտրական ոկրուգ :

Հետեապէս, Ազգութիւնների Խորհրդի ընտրութիւնների համար կկազմվի ընդամենը $275 + 242 + 45 + 12 = 574$ ընտրական ոկրուգ :

ՀԱՐՑ 51.—Ընդամենը Գերագույն Խորհրդի քանի՞ պատգամավոր կլինեն :

ՊԱՏԱՍԽԱՆ.—Վորովհետեւ յուրաքանչյուր ընտրական ոկրուգ Միութեան Խորհուրդ և Ազգութիւնների Խորհուրդ կուղարկի մեկական պատգամավոր և վորովհետեւ մոտավորապէս կլինի ընդամենը 1144 ընտրական ոկրուգ, ապա Գերագույն Խորհրդի պատգամավորների ընդհանուր թիւը կկազմի մոտավորապէս 1144 (Միութեան Խորհրդին և Ազգութիւնների Խորհրդին միասին) :

ՀԱՐՑ 52.—Կհամընկնե՞ն արդյոք Միութեան Խորհրդի ու Ազգութիւնների Խորհրդի ընտրութիւնների ընտրական ոկրուգներէ սահմանները :

ՊԱՏԱՍԽԱՆ.—Արդեն ընտրական ոկրուգների մասին վերը ա-

աածից պարզ է, վոր, վորպես կանոն, այդ սահմանները համընկնել չեն կարող և չեն համընկնի:

Միության խորհրդի ընտրությունների յուրաքանչյուր ընտրական ոկրուգ կընդգրկի 300 հազ. բնակչութիւն:

Իսկ աղգութիւնների խորհրդի ընտրութիւնների ընտրական ոկրուգները կընդգրկեն բնակիչների տարբեր քանակութիւն:

Որինակ, ՌԽՅՍՀ-ից Աղգութիւնների խորհրդի համար կատարված ընտրութիւնների ժամանակ մեկ ընտրական ոկրուգը ՌԽՅՍՀ-ում կընդգրկի մոտավորապես 4200 հազ. մարդ:

ՈՒԽՍՀ-ից Աղգութիւնների խորհրդի համար կատարված ընտրութիւնների ժամանակ մեկ ընտրական ոկրուգը ՌԽՍՀ-ում կընդգրկի մոտավորապես 1300 հազ. բնակիչ:

Այստեղից հանրապետութիւններից Աղգութիւնների խորհրդի համար կատարված ընտրութիւնների ժամանակ ընտրական ոկրուգները բնակիչների նույնպես տարբեր քանակ կընդգրկեն:

Պարզ է, վոր Միության խորհրդի և Աղգութիւնների խորհրդի ընտրութիւնների ընտրական ոկրուգների սահմանները չեն համընկնի:

Գ Լ ՈՒԽ IV

ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԵՐԸ

ՀԱՐՅ 53.—Ի՞նչ է ընտրական տեղամասը և ինչի՞ համար է նա պետք:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Ընտրական բյուլետեններն ավելի հարմար կերպով ընդունելու և ձայները հաշվելու համար յուրաքանչյուր ընտրական ոկրուգ կրթականի աշակերտ կոչված ընտրական տեղամասերի, այսինքն՝ ոկրուգի փոքր մասերի:

Ոկրուգը բաժանելով վոչ-մեծաքանակ բնակչութիւն ունեցող (1500—2500 մարդ) ընտրական տեղամասերի, կարելի յե զգալի կերպով հեշտացնել ոկրուգի ընտրութիւններն անցկացնելը:

Միանգամայն ակնհայտ է, վոր շատ ավելի հարմար ու ռացիոնալ է բյուլետենների ընդունումն ու ձայների հաշվումը կատարել ըստ միջանի վոչ-մեծ տեղամասերի, քան ըստ մեծ ոկրուգի:

Յեթե ամբողջ ոկրուգի ընտրողները պարտավոր լինեյին ի-

րենց բյուլետենները տալ մի տեղում, ապա թե բյուլետենների ընդունումը և թե բյուլետենների հաշվումը վերին աստիճանի զգալի կլինեի ու շատ ավելի ժամանակ կպահանջեր:

Մինչդեռ համաձայն «Ընտրութիւնների կանոնադրութիւն» 71 և 74-րդ հոդվածների՝ խՍՀՄ Գերագույն խորհրդի ընտրութիւնները կատարվում են մի որվա ընթացքում—վորն ընդհանուր է ամբողջ խՍՀՄ համար—առավոտյան ժամի 6-ից մինչև զիշերվա ժամի 12-ը:

Պարզ է, վոր առանց ընտրական ոկրուգն ընտրական տեղամասերի բաժանելու չի կարելի յոյա դնալ:

ՀԱՐՅ 54.—Ի՞նչպես են կազմակերպվում մեղնում ընտրական տեղամասերը:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Ընտրական տեղամասերի կազմակերպումը մեղնում կառուցված է այնպես, վորպեսզի ընտրողների համար ապահովվեն քվեարկութիւն առավել հարմար պայմաններ և, հետևապես, ապահովվի ընտրողների ամենամեծ մասնակցութիւնն ընտրութիւններին, վորպեսզի ընտրութիւնները լինեն իրոք ընդհանուր:

Ընտրութիւնները պետք է այնպես կազմակերպվեն, վորպեսզի ընտրողներն ստիպված չլինեն քվեարկութիւն համար յոթը արի հետև դնալ, կորցնելով դրա համար մի ամբողջ ուր, իսկ ավելի մեծ տարածութիւն դեպքում՝ ե՛լ ավելի:

Գյուղական վայրերում մեծ տերիտորիայի վրա ցրված փոքր բնակավայրերի դեպքում գյուղացիները խիստ շատ ժամանակ կկորցնեյին ընտրական ոկրուգի կենտրոնը դնալու համար:

Վորպեսզի ընտրողների համար ապահովվեն առավել մեծ հարմարութիւններ ու լիակատար հնարավորութիւն իրենց քաղաքացիական պարտքը կատարելու, «Կանոնադրութիւնը» վո՛չ միայն ոկրուգը բաժանում է տեղամասերի, այլև կազմակերպում է այդ տեղամասերը՝ բնակչութիւն վոչ-մեծ քանակութիւն հաշվով, այսինքն՝ տեղամասերն առավել մոտեցնելով ընտրողներին:

Ըստ մեր Ընտրական որենքի՝ այն քաղաքները, արդյունաբերական կետերը, գյուղերը և գյուղխորհրդի տերիտորիան, վորոնք 2 հազ. բնակիչից ավելի ունեն, կրթական բնտրական տեղամասերի՝ 1500—2500 բնակիչին մի ընտրական տեղամաս հաշվելով:

Յուրաքանչյուր ստանիցայում, գյուղում, դչաղում, առում, վոր ունի 500, բայց վոչ ավելի քան 2000 բնակիչ, կազմա-

կերպովում և առանձին ընտրական տեղամաս (Վանոնադրության» հոդված 28) :

ԽՍՀՄ ԿԳԿ 1937 թվականի հոկտեմբերի 3-ի վորոշմամբ թույլատրված և առանձին ընտրական տեղամասեր կազմել գյուղերում կամ գյուղերի մի խմբում, վոր ունեն 500-ից քիչ մարդ, բայց վոչ պակաս քան 300 մարդ, այն դեպքերում, յերբ այդպիսի գյուղերի հեռավորությունն ընտրական տեղամասից ավելի յե քան 10 կիլոմետր :

Հյուսիսային և արևելյան հեռավոր շրջաններում, վորտեղ դերակշռում են մանր բնակավայրերը, կարող են կազմակերպվել ընտրական տեղամասեր նաև 100 հոգի բնակչությամբ (Վանոնադրության» հոդված 29) :

Բացի այդ, հյուսիսի աղջային ոկրուղները համար, ինչպես նաև լեռնային ու վաչկատուն շրջանների համար միութենական հանրապետությունների Կենտրոնական Գործադիր Կոմիտեները թույլտվությամբ թույլատրվում և կազմակերպել ընտրական տեղամասեր 100 հոգուց ավելի քիչ բնակչությամբ, սակայն 50-ից վոչ ցած : (ԽՍՀՄ ԿԳԿ 1937 թվականի հոկտեմբերի 3-ի վորոշումը) :

Ձինվորական մասերը և զորական միավորումները կազմում են առանձին ընտրական տեղամասեր՝ վոչ պակաս քան 50 և վոչ ավելի քան 1500 ընտրողներով : Այդ տեղամասերը մտնում են ընտրական ոկրուղի մեջ՝ ըստ այն վայրի, վորտեղ գտնվում և գործառնում կամ զորական միավորումը (Վանոնադրության» հոդված 31) :

ՀԱՐՑ 55.—Ի՞նչպես կկազմակերպվի ընտրական բյուլետենների ընդունումն այն ընտրողներից, վորոնք կգտնվեն նավարկության մեջ նավի վրա, հիվանդանոցներում, սանատորիաներում, հաշմանդամների տներում, ծննդատներում և այլն :

ՊԱՏԱՍԽԱՆ.—Ընտրությունների որը նավարկության մեջ գտնվող նավերի վրա յեղած ընտրողներից, ինչպես նաև այն ընտրողներից, վորոնք կգտնվեն հիվանդանոցներում, սանատորիաներում, ծննդատներում և հաշմանդամների տներում, այդ տեղերում ընտրողներից ընտրական բյուլետեններն ընդունելու համար կկազմակերպվեն հատուկ ընտրական տեղամասեր : Այս բանի համար անհրաժեշտ և մեկ պայման—նավերի վրա, հիվանդանոցներում և այլն 50 հոգուց վոչ պակաս ընտրողների առկա-

յություն : Այդպիսի դեպքերում նավերը կարող են կազմել առանձին ընտրական տեղամասեր . նույնպիսի ընտրական տեղամասեր կարող են ստեղծվել հիվանդանոցներին, հաշմանդամների տներին, սանատորիաներին ու ծննդատներին կից :

ՀԱՐՑ 56.—Ինչո՞ւ Ընտրական որենքը չի թույլատրում 50 հոգուց պակաս ընտրողներ ունեցող ընտրական տեղամասեր կազմել :

ՊԱՏԱՍԽԱՆ.—Մեկ ընտրական տեղամասում 50-ից պակաս ընտրող չի թույլատրվում քվեարկության գաղտնիքը պահպանելու շահերի տեսակետից : Ընտրողների քիչ քանակության դեպքում հեշտ կլինի պարզել, թե ով ինչպես և քվեարկել :

ՀԱՐՑ 57.—Ի՞նչպես պիտի կազմակերպվեն ընտրական տեղամասեր վաչկատուն ժողովուրդները համար :

ՊԱՏԱՍԽԱՆ.—«ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրությունների կանոնադրությունը» քաղաքացիներին նստակյացների ու վաչկատունների չի բաժանում : Ճիշտ նույնպես «Կանոնադրությունը» նստակեցության վոչ մի ցենդ չի ճանաչում : «Կանոնադրության» 8-րդ հոդվածում ուղղակի խոսվում և ընտրողների մասին, անկախ այն բանից, մշտապես, թե ժամանակավոր են ապրում նրանք տվյալ խորհրդի տերիտորիայում :

Աշխատավորների պատգամավորների այն խորհուրդը, վորի տերիտորիայի վրա յե գտնվում դնչոնների թափառախումբը կամ վորի տերիտորիայի վրա յեն տվյալ ժամանակում ապրում վաչկատուն ցեղերը, նրանց մտցնում և իր ընտրական ցուցակների մեջ :

Տվյալ գյուղխորհրդի տերիտորիայի սահմաններից դուրս գալու դեպքում թափառախումբը կմտնի նոր ոկրուղի մեջ : Քվեարկությանը մասնակցելու համար այդ թափառախմբի անդամները պետք և ձեռք բերեն «քվեարկության իրավունքի վկայականներ», ինչպես այդ վորոշված և «Կանոնադրության» 15-րդ հոդվածում :

ՀԱՐՑ 58.—Որենքով ո՞ւմ վրա յե դրված ընտրական տեղամասեր կազմակերպելու դործը :

ՊԱՏԱՍԽԱՆ.—Ռայոնական բաժանում ունեցող քաղաքներում այդ պարտականությունը դրված և աշխատավորների պատգամավորների ու ռայոնական խորհուրդների վրա, շրջանային բաժանում չունեցող քաղաքային խորհուրդների վրա . գյու-

ղական վայրերում—աշխատավորների պատգամավորների շրջանային խորհուրդների վրա:

Ընտրական տեղամասեր կազմելը պետք է կատարվի վոչ ուշ քան ընտրություններից 45 օր առաջ:

Գ Լ Ո Ի Խ Վ

ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

ՀԱՐՅ 59.—ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրություններին ինչպիսի ընտրական հանձնաժողովներ պիտի գործեն:

ՊԱՏԱՍԽԱՆ.—ԽՍՀ Միության Գերագույն Խորհրդի ընտրություններին պիտի գործեն հետևյալ ընտրական հանձնաժողովները.—

1) ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրությունների Կենտրոնական ընտրական հանձնաժողով, 2) Ազգությունների Խորհրդի ընտրությունների միութենական ու ավտոնոմ հանրապետությունների, ավտոնոմ մարզերի ու ազգային ոկրուզների ընտրական հանձնաժողովներ, 3) Միության Խորհրդի ընտրությունների ոկրուզային ընտրական հանձնաժողովներ, 4) Ազգությունների Խորհրդի ընտրությունների ոկրուզային ընտրական հանձնաժողովներ և 5) տեղամասային ընտրական հանձնաժողովներ:

ՀԱՐՅ 60.—Ինչպես են կազմվում այդ ընտրական հանձնաժողովները:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Վերը նշված ընտրական հանձնաժողովներից յուրաքանչյուրը կազմվում է աշխատավորների հասարակական կազմակերպությունների ու ընկերությունների ներկայացուցիչներից և հաստատվում է աշխատավորների պատգամավորների համապատասխան խորհրդի կողմից: Այսպես, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հաստատվում է ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահության կողմից, միութենական և ավտոնոմ հանրապետությունների ընտրական հանձնաժողովները հաստատվում են համապատասխան հանրապետությունների գերագույն խորհուրդների նախագահությունների կողմից, ավտոնոմ մարզերի ու ազգային ոկրուզների ընտրական հանձնաժողովները հաստատվում են համապատասխան ավտոնոմ մարզերի ու ազգային ոկրուզների աշխատավորների պատգամավորների խորհուրդների կողմից:

ՀԱՐՅ 61.—Ինչպիսի կազմով պիտի գործեն ընտրական հանձնաժողովները:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Բոլոր հանձնաժողովները պիտի գործեն հետևյալ կազմով—նախագահ, փոխնախագահ, քարտուղար և մի քանի անդամներ: Ընտրական հանձնաժողովների անդամների թիվը որոշվում տարբեր է սահմանված. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կունենա 15 անդամ (ներառյալ նախագահը, փոխնախագահը և քարտուղարը), միութենական ու ավտոնոմ հանրապետությունների, ավտոնոմ մարզերի ու ազգային ոկրուզների Ազգությունների Խորհրդի ընտրությունների ընտրական հանձնաժողովներում—9—13—ական անդամ, Միության Խորհրդի և Ազգությունների Խորհրդի ընտրությունների ոկրուզային ընտրական հանձնաժողովներում—11—ական անդամ, տեղամասային ընտրական հանձնաժողովներում—7—11—ական անդամ:

ՀԱՐՅ 62.—Ինչ պարտականություններ պիտի կրի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պարտականությունները շարադրված են «Ընտրությունների կանոնադրության» 36-րդ հոդվածում:

Այդ պարտականություններն են.—ԽՍՀՄ ամբողջ տերիտորիայում հսկել «ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրությունների կանոնադրության» կատարմանը, մյուս ընտրական հանձնաժողովների սխալ գործողությունների վերաբերյալ բողոքները քննելն ու նրանց լուծում տալը, ընտրական արկղերի նմուշները, «քվեարկության իրավունքի վկայականների» ձևը, ընտրական բյուլետենների ու նրանց ծրարների ձևն ու դույնը, ընտրողների ցուցակների ձևը, ձայները հաշվելու արձանագրության ձևը և ընտրվելու վերաբերյալ վկայականի ձևը սահմանելը:

Բացի դրանից, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ղեկավարացիայի յե յենթարկում Գերագույն Խորհրդի ընտրված պատգամավորներին: Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ել հենց ընտրությունների ամբողջ գործավարությունը հանձնում է Միության Խորհրդի ու Ազգությունների Խորհրդի մանդատային հանձնաժողովներին:

ՀԱՐՅ 63.—Վորո՞նք են Ազգությունների Խորհրդի ընտրությունների միութենական ու ավտոնոմ հանրապետությունների, ավտոնոմ մարզերի ու ազգային ոկրուզների ընտրական հանձնաժողովների ֆունկցիաները:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Այդ ընտրական հանձնաժողովները ֆունկցիաները պիտի լինեն—հսկել հանրապետության, ավտոնոմ մարզի, ազգային ոկրուզի տերիտորիայում Ազգությունների խորհրդի ընտրությունների ժամանակ «ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ընտրությունների կանոնադրության» կատարմանը և Ազգությունների խորհրդի ընտրություններում տեղի ունեցած սխալ գործողությունների վերաբերյալ բողոքները քննելը:

ՀԱՐՅ 64.—Վորոնք են Միության խորհրդի ընտրությունների ու Ազգությունների խորհրդի ընտրությունների ոկրուզային ընտրական հանձնաժողովների ֆունկցիաները:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Թե՛ Միության խորհրդի ընտրությունների ոկրուզային և թե՛ Ազգությունների խորհրդի ընտրությունների ոկրուզային ընտրական հանձնաժողովների ֆունկցիաները հիմնականում համընկնում են և հետևյալներն են.

ա) Միության խորհրդի և Ազգությունների խորհրդի համար առաջադրված թեկնածուներին ռեգիստրացիայի յենթարկելը.

բ) համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովներին ընտրական բյուլետեններ ու ծրարներ մատակարարելը.

գ) ձայների հաշվումը և ընտրությունների արդյունքները վերջնելը՝ ըստ ոկրուզի.

դ) ընտրված պատգամավորին ընտրվելու մասին վկայական տալը.

ե) ընտրությունների վերաբերյալ գործավարությունը կենտրոնական ընտրական հանձնաժողովին և համապատասխանորեն՝ Ազգությունների խորհրդի ընտրությունների հանրապետական հանձնաժողովին կամ ավտոնոմ մարզի ընտրական հանձնաժողովին ներկայացնելը:

Բոլոր այս ֆունկցիաներն ընդհանուր են թե՛ Միության խորհրդի ընտրությունների ոկրուզային հանձնաժողովների և թե՛ Ազգությունների խորհրդի ընտրությունների ոկրուզային հանձնաժողովների համար: Սակայն Միության խորհրդի ընտրությունների ոկրուզային հանձնաժողովները կատարում են այս ֆունկցիաների այն մասը, վերը վերաբերում է Միության խորհրդի ընտրություններին, իսկ Ազգությունների խորհրդի ընտրությունների ոկրուզային հանձնաժողովներն՝ այն մասը, վերը վերաբերում է Ազգությունների խորհրդի ընտրություններին:

Բացի դրանից, Միության խորհրդի ընտրությունների ոկրուզային հանձնաժողովների վրա պարտականություն է դրված հրո-

կել նաև աշխատավորների պատգամավորների խորհուրդների համապատասխան գործադիր կոմիտեների կողմից ընտրական տեղամասերը ժամանակին կազմակերպելու գործի վրա և հսկել ընտրողների ցուցակները ժամանակին կազմելու ու հրապարակելու գործի վրա:

ՀԱՐՅ 65.—Վորոնք են տեղամասային ընտրական հանձնաժողովների ֆունկցիաները:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Տեղամասային ընտրական հանձնաժողովները ա) ընտրական տեղամասերում ընդունում են ընտրական բյուլետենները,

բ) հաշվում են Միության խորհրդի և Ազգությունների խորհրդի պատգամավորության յուրաքանչյուր թեկնածուին տրված ձայները,

գ) ընտրությունների գործավարությունը հանձնում են համապատասխանորեն Միության խորհրդի ընտրությունների ոկրուզային և Ազգությունների խորհրդի ընտրությունների ոկրուզային ընտրական հանձնաժողովներին:

ՀԱՐՅ 66.—Վորոնք պիտի լինեն տեղամասային ընտրական հանձնաժողովի պարտականություններն ընտրությունների ժամանակ:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Տեղամասային ընտրական հանձնաժողովը պարտավոր է նախքան ընտրությունները 20 որ շարունակ ամեն որ ընտրողներին լայն կերպով տեղեկացնել ընտրությունների որվա և տեղի մասին: Հանձնաժողովի նախագահը նրա անդամների ներկայությամբ պարտավոր է ստուգել ընտրական արկղերը, ընտրողների ցուցակի առկայությունը, կնքել արկղները և հրավիրել ընտրողներին սկսել քվեներ տալը: Տեղամասային ընտրական հանձնաժողովը կատարում է ընտրական բյուլետենների ընդունումը և յուրաքանչյուր թեկնածուի ստացած ձայների հաշվումը:

ՀԱՐՅ 67.—Ի՞նչպես պիտի վերջնվեն ընտրությունների արդյունքները:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Ընտրությունների արդյունքները կվերջնվեն այն ձայների հաշվումը կատարելու միջոցով, վոր տրված են այս կամ այն թեկնածուին ամբողջ ընտրական ոկրուզում:

ՀԱՐՅ 68.—Ընտրական հանձնաժողովներում ի՞նչպես են վճռվում այս կամ այն հարցերը:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Ընտրական հանձնաժողովներում բոլոր հարցերը վճռվում են ձայների հասարակ մեծամասնությամբ: Հե-

տեւապետ, 15 անգամ ունեցող հանձնաժողովում հարցերը վճռու-
վում են 8 ձայնի մեծամասնությամբ: Ձայների հավասարութեան
գեպքում—նախագահի ձայնը գերակշռութիւնն է տալիս:

Գ Լ Ո Ի Խ ՎԻ

ԽԱՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

ՀԱՐՑ 69.—Ի՞նչպես պիտի առաջադրվեն ԽՈՀՄ Գերագույն
Խորհրդի պատգամավորութեան թեկնածուներ:

ՊԱՏԱՍԽԱՆ.—ԽՈՀՄ Գերագույն Խորհրդի պատգամավորու-
թեան թեկնածուներ առաջադրելու կարգի մասին մանրամասնո-
րեն խոսվում է «ԽՈՀՄ Գերագույն Խորհրդի ընտրութիւնների
կանոնադրութեան» ՎԻ գլխում:

Ըստ մեր ընտրական որենքի (հոդված 56)՝ ԽՈՀՄ Գերա-
գույն Խորհրդի պատգամավորութեան թեկնածու առաջադրել կա-
րող են աշխատավորների բոլոր հասարակական կազմակերպու-
թիւններն ու ընկերութիւնները՝ համաձայն Սահմանադրութեան
141-րդ հոդվածի:

«Կանոնադրութեան» 56-րդ հոդվածը, թվարկելով աշխատա-
վորների այդ կազմակերպութիւններն ու աշխատավորների ընկե-
րութիւնները, հասկանալի չէ, չի տալիս կազմակերպութիւննե-
րի ու ընկերութիւնների սպառիչ ցանկը: 56-րդ հոդվածում աշ-
խատավորների թվարկված հասարակական կազմակերպութիւն-
ների ու ընկերութիւնների կողքին խոսվում է նաև հասարակա-
կան այլ կազմակերպութիւնների մասին, վորոնք որենքի սահ-
մանած կարգով գրանցված են:

Այդպիսով, հասարակական ուղածը կազմակերպութիւնը,
վորը հասարակական նպատակներ է հետապնդում, իր գործու-
նեցութիւնն ուղղում է սոցիալիստական կառուցման շահերի կող-
մը, ըստ մեր որենքի՝ իրավունք ունի Գերագույն Խորհրդի պատ-
գամավորութեան թեկնածու առաջադրել:

«Թեկնածու առաջադրելու իրավունքն իրականացնում են աշ-
խատավորների հասարակական կազմակերպութիւնների և ընկե-
րութիւնների ինչպես կենտրոնական որդանները, նույնպես և
նրանց հանրապետական, յերկրային, մարզային և շրջանային ու-

ղանները, հալասարապես և բանվորների ու ծառայողների ընդ-
հանուր ժողովները ձեռնարկութիւններում, կարմիր-բանակային-
ների ընդհանուր ժողովները—գործադասերում, ինչպես և դյուղա-
ցիների ընդհանուր ժողովները—կոլտեսեսութիւններում, խորհ-
տեսեսութիւնների բանվորների ու ծառայողների ընդհանուր
ժողովները—խորհտեսեսութիւններում»: (Հոդված 57):

ՀԱՐՑ 70.—Ձանազան աղանդավորական և ընդհանրապես
կրօնական խմբեր, համայնքներ և այլն իրավունք ունե՞ն արդյոք
Գերագույն Խորհրդի թեկնածուներ առաջադրելու:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Ինչպես մենք արդեն ասել ենք, Գերագույն
Խորհրդի թեկնածուներ առաջադրելու իրավունքը մեր Սահմանա-
դրութեամբ վերապահված է աշխատավորների հասարակակա-
ն կազմակերպութիւններին և ընկերութիւններին:

Բոլոր աշխատավորները, ինչ աշխատանքով էլ վոր զբաղվե-
լիս լինեն, կարող են Սահմանադրութեան 126-րդ հոդվածի հի-
ման վրա միավորվել զանազան հասարակական կազմակերպու-
թիւնների մեջ—արհեստակցական միութիւններ, կոոպերատիվ
միավորումներ, յերիտասարդութեան կազմակերպութիւններ,
սպորտային, պաշտպանական կազմակերպութիւններ, կուլտու-
րական, տեխնիկական, գիտական ընկերութիւններ, իսկ բան-
վոր դասակարգի շարքերից և աշխատավորների այլ խավերից յե-
լած առավել ակտիւ ու գիտակից քաղաքացիները—համամիութե-
նական կոմունիստական (բոլշևիկների) կուսակցութեան մեջ, վորը
հանդիսանում է աշխատավորների առաջավոր ջոկատը սոցիալիս-
տական հասարակակարգի ամրապնդման ու զարգացման համար
նրանց մղած պայքարում և վորն իրենից ներկայացնում է բոլոր
կազմակերպութիւնների, ինչպես հասարակական, նույնպես և
պետական կազմակերպութիւնների ղեկավար միջուկը:

ԽՈՀՄ յուրաքանչյուր քաղաքացի կարող է դառնալ վերը
թված կազմակերպութիւններից վորեւէ մեկի անդամ և վորպես
աշխատավորների այդ հասարակական կազմակերպութեան կամ
ընկերութեան անդամ մասնակցել ԽՈՀՄ Գերագույն Խորհրդի
թեկնածուներ առաջադրելուն:

Թեկնածուներ առաջադրելու իրավունք չունեն այսպես կոչ-
ված «քսանանոցները»: Այդ «քսանանոցները» ընկերութիւններ ու
հասարակական կազմակերպութիւններ չեն հանդիսանում: «Քսա-
նանոցները» ռեզիստորացիայի յեն յենթարկվում առանձին կար-
գով, վոր նրանց համար սահմանված է ՀամկԳԿ-ի և ՌԽՑՍՀ

ժկիւ-ի 1929 թ. ապրիլի 8-ի վորոշմամբ, և, համաձայն այդ վորոշման, չունեն իրենց կանոնադրութիւնը, իրավական անձի իրավունքով չեն ոգտվում, չունեն իրենց ընտրովի ներկայացուցչական որդանները: Իրենց գործունեութեան մեջ նրանք պիտի սահմանափակվեն բացառապես այն նպատակներով, վորոնց համար նրանք կազմվում են, այսինքն՝ ինչպես այդ մասին ասված է հենց 1929 թ. ապրիլի 8-ի վորոշման մեջ, «իրենց կրօնական պահանջմունքների բավարարումով»:

ՀԱՐՅ 71.—Առանձին քաղաքացիներ իրավունք ունի՞ արդյոք Գերագույն Խորհրդի պատգամավորութեան թեկնածու առաջադրելու:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Սահմանադրութեան 141-րդ հոդվածի հիման վրա առանձին քաղաքացիները ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի պատգամավորութեան թեկնածու առաջադրելու իրավունք չունեն:

ՀԱՐՅ 72.—Իրավունք կունենա՞ն արդյոք ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի պատգամավորութեան թեկնածուներ առաջադրելու մենատնտես-գյուղացիները, տնային տնտեսուհիները և այլն:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Մենատնտես-գյուղացիները թեկնածուներ առաջադրելու մեջ կարող են մասնակցել վորպես աշխատավորների այն հասարակական կազմակերպութիւնների և ընկերութիւնների ու նրանց տեղական որդանների (ներառյալ մինչև ռադիկալներ) անդամներ, վորոնց մասին խոսում է «Կանոնադրութեան» 57-րդ հոդվածը:

Նույնը պետք է ասել նաև տնային տնտեսուհիների, տնայնագործների և այլ քաղաքացիների մասին, վորոնք ձեռնարկութիւններում կամ խորհրդատեսութիւններում չեն աշխատում:

ՀԱՐՅ 73.—Ո՞վ կարող է ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի պատգամավորութեան թեկնածու առաջադրվել:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Մեր ընտրական որենքը քաղաքացիներին չի բաժանում այնպիսի ընտրողների, վորոնք ակտիվ ընտրական իրավունք ունեն, և այնպիսի ընտրողների, վորոնք պասսիվ ընտրական իրավունք ունեն:

Կապիտալիստական յերկիրներում վո՛չ բոլոր ընտրողները կարող են ընտրվել իրենց պառլամենտի անդամ: Այսպես, ԱՄՆահանգներում ներկայացուցիչների պալատի անդամ ընտրվելու համար պետք է լինել վոչ պակաս քան 25 տարեկան, իսկ սենատի անդամ ընտրվելու համար՝ 30 տարեկան (ԱՄՆ-ի 1787 թ. սեպտեմբերի 17-ի Սահմանադրութեան հոդվ. 2, բաժ. II և հոդվ.

3, բաժ. III), իսկ ընտրական իրավունք քաղաքացիներն ստանում են 21 տարեկանից: Ֆրանսիայում պատգամավորների պալատի անդամների համար սահմանված է 25 տարեկանից վոչ ցած հասակ, սենատի անդամների համար—40 տարեկան. Չեխոսլովակիայում 30 տարեկան և 40 տարեկան և այլն:

Մեր Ընտրական որենքը հասակի նկատմամբ վոչ մի տարբերութիւն չի դնում վո՛չ Միութեան Խորհրդի և Ազգութիւնների Խորհրդի թեկնածուների միջև և վո՛չ ել ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրողների ու թեկնածուների միջև:

Ըստ մեր Ընտրական որենքի՝ ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի անդամ կարող է ընտրվել ամեն մի քաղաքացի, վոր 18 տարեկան է և ունի ընտրական իրավունք:

ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի պատգամավորութեան թեկնածուների համար մեր որենքը վոչ մի հատուկ պայման չի սահմանում: Անդրիայում, որինակ, յուրաքանչյուր թեկնածուի համար պետք է մտցվի 150 ֆունտ ստերլինգ (3057,6 ռուբ.) դրամական, ձապոնիայում գրավականն արտահայտվում է 2 հազ. յենով (3934,5 ռուբ.), ընդվորում ընտրութիւնների ժամանակ թեկնածուների տապալման դեպքում այդ գրավականը բռնադարվվում է հոգուտ պետութեան: 1930 թ. այդպիսի տուգանքներից ձապոնական կառավարութեան ստացած ընդհանուր գումարը համարվում էր 743 հազ. յենի: Մի քանի յերկիրներում (որինակ վասարվում էր 743 հազ. յենի: Մի քանի յերկիրներում (որինակ Ֆրանսիայում, Չեխոսլովակիայում) թեկնածուի վրա դրվում են ընտրական բյուլետենների արժեքը վճարելու ծախքերը:

Մեզնում ԽՍՀՄ-ում վոչ մի նման բան գոյութիւն չունի, վո՛չ «ընտրական գրավականներ», վո՛չ ել ընտրութիւնների ծախքերը թեկնածուների կողմից հատուցվել մեզնում չկան:

Մասնավորապես ընտրութիւնների բոլոր ծախքերը կամ, ինչպես ասվում է «Կանոնադրութեան» մեջ, ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրութիւնների հետ կապված ծախքերը կատարվում են պետութեան հաշիւին:

ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի պատգամավորութեան թեկնածուներ կառաջադրի ինքը ժողովուրդը, յենկելով բացառապես այս կամ այն քաղաքացու անձնական ընդունակութիւններից, նրա աշխատանքից ու նրա վերաբերմունքից դեպի իր՝ խորհրդային քաղաքացու պարտականութիւնները, նրա նվիրվածութիւնից անցիւրդմի համար մղվող պայքարի գործին, նրա նվիրվածութիւնից մեր մեծ հայրենիքին, Լենինի—Ստալինի մեծ կուսակցու-

Թյանը, նրա անհաշտությունից դեպի խորհրդային իշխանության ու խորհրդային ժողովրդի թշնամիները, դեպի բանվորների ու գյուղացիների թշնամիները:

Ահա թե մեղանում ինչպիսի հատկություններով պետք է ոժտված լինել, վորպեսզի արժանանալ ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի անդամ ընտրվելու մեծ պատվին:

ՀԱՐՑ 74.—Խոնչպես պիտի տեղի ունենա ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի թեկնածուների առաջադրումը:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Աշխատավորների հասարակական կազմակերպությունները կամ ընկերությունները, վորոնք ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի պատգամավորության թեկնածու յեն առաջադրել, պարտավոր են ուղրուգային ընտրական հանձնաժողովին ներկայացնել «Կանոնադրության» 61-րդ հոդվածում նշված փաստաթղթերը: Դա, առաջինը, թեկնածու առաջադրած ժողովի կամ նիստի արձանագրությունն է և, յերկրորդ, պատգամավորության թեկնածուի հայտարարությունը, թե ինքը համաձայն է քվեարկվելու տվյալ ընտրական ուղրուգում՝ իրեն առաջադրած կազմակերպության կողմից:

Արձանագրության մեջ պետք է նշված լինեն թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը, տարիքը, բնակության տեղը, կուսակցականությունն ու զբաղմունքը: Բացի դրանից, պետք է նշված լինի, թե վորտեղ և յերբ է տեղի ունեցել այդ ժողովը կամ նիստը և թե քանի հոգի յեն յեղել այդ ժողովի կամ նիստի մասնակիցները:

Արձանագրությունը պետք է ստորագրված լինի տվյալ ժողովի կամ նիստի նախագահության անդամների կողմից, նշելով նրանց տարիքը, բնակության տեղը և թեկնածուին առաջադրող կազմակերպության անունը:

Թեկնածուին ուղրուգային հանձնաժողովին ներկայացնելը պետք է տեղի ունենա վոչ ուշ, քան ընտրություններից 30 որ առաջ: Թեկնածուներին պետք է ներկայացնել կա'մ Միության Խորհրդի ընտրությունների ուղրուգային հանձնաժողովին, կա'մ Աղրությունների Խորհրդի ընտրությունների ուղրուգային հանձնաժողովին, նայելով թե վորտեղ է առաջադրված տվյալ թեկնածուությունը:

Համապատասխան ուղրուգային ընտրական հանձնաժողովը, ռեզիստրացիայի յենթարկելով թեկնածուին, հրապարակում է

թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը, տարիքը, զբաղմունքը, կուսակցականությունը և նրան առաջադրող կազմակերպության անունը վոչ ուշ, քան ընտրություններից 25 որ առաջ («Կանոնադրության» հոդված 65): Ռեզիստրացիայի յենթարկված յուրաքանչյուր թեկնածու այնուհետև մտցվում է ընտրական բյուրեղների մեջ:

ՀԱՐՑ 75.—Պարտավոր է արդյոք ուղրուգային ընտրական հանձնաժողովը ռեզիստրացիայի յենթարկել յուրաքանչյուր թեկնածուի:

ՊԱՏԱՍԽԱՆ.—«Կանոնադրության» 60-րդ հոդվածն այսպես է ասում. «Միության Խորհրդի ընտրություններին և Աղրություններին Խորհրդի ընտրությունների ուղրուգային ընտրական հանձնաժողովները պարտավոր են ռեզիստրացիայի յենթարկել ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի պատգամավորության այն բոլոր թեկնածուներին, վորոնք առաջադրվել են աշխատավորների հասարակական կազմակերպությունների ու ընկերությունների կողմից, պահպանելով ԽՍՀՄ Սահմանադրության և «ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրությունների կանոնադրության» պահանջները:

Հետևապես, ռեզիստրացիան պարտադիր է: Յեթե, սակայն, թեկնածուն չի բավարարում ԽՍՀՄ Սահմանադրության և «Ընտրությունների կանոնադրության» բոլոր պահանջներին, ապա ընտրական հանձնաժողովը պարտավոր է մերժել այդ թեկնածուին ռեզիստրացիայի յենթարկելու: Իսկ ի՞նչպիսին են այդ պահանջները: Նրանց մասին մենք արդեն խոսել ենք: Նրանք հանդում են այն բանին, վոր թեկնածուն 18-ից պակաս տարիք չունենա ու զրկված չլինի ընտրական իրավունքներից և վորպեսզի թեկնածուին առաջադրող կազմակերպություն իրավունք ունենա ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի պատգամավորության թեկնածուներ առաջադրելու:

Այս յերկու պայմանի կամ թեկուզ այդ պայմաններից մեկնումեկի բացակայության դեպքում ուղրուգային ընտրական հանձնաժողովը պետք է մերժի ռեզիստրացիայի յենթարկելու այդպիսի թեկնածուին: Նշանակում է, այդպիսի թեկնածուն ընտրական բյուրեղների մեջ մտցվելու և քվեարկվելու յենթակա չէ:

ՀԱՐՑ 76.—Կարելի՞ է արդյոք բողոքարկել ուղրուգային ընտրական հանձնաժողովի մերժումը՝ ռեզիստրացիայի յենթարկելու պատգամավորության թեկնածուին:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Կարելի չէ: Այս իրավունքն ուղղակի նախատեսված է «Կանոնադրության» 63 և 64 հոդվածներով:

ՀԱՐՅ 77.—Սահմանված է արդյոք վորևէ ժամկետ բողոքարկելու համար ոկրուգային հանձնաժողովի մերժումը՝ ռեգիստրացիայի յենթարկելու թեկնածուին:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Սահմանված է: Այս ժամկետը յերկրորդ յենթաբողոքարկելու համար ինչպէս Միության Խորհրդի ընտրութիւնների ոկրուգային ընտրական հանձնաժողովի, նույնպէս և Ազգութիւնների Խորհրդի ընտրութիւնների ոկրուգային ընտրական հանձնաժողովի մերժումները:

ՀԱՐՅ 78.—ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի պատգամավորության թեկնածուին ոկրուգային ընտրական հանձնաժողովի կողմից ռեգիստրացիայի յենթարկելը մերժելու համար վո՞րտեղ պետք է ներկայացնել բողոքը:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Միության Խորհրդի ընտրութիւնների ոկրուգային ընտրական հանձնաժողովի մերժման համար բողոք պետք է ներկայացնել Կենտրոնական ընտրական հանձնաժողովին, վորի վճիռը վերջնական է և հետագա բողոքարկման յենթակա չէ:

Ազգութիւնների Խորհրդի ընտրութիւնների ոկրուգային ընտրական հանձնաժողովի մերժման համար բողոք պետք է ներկայացնել միութենական կամ ավտոնոմ հանրապետության, կամ ավտոնոմ մարզի համապատասխան ընտրական հանձնաժողովին, իսկ վերջիններիս վորոշման համար՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովին: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վճիռն այս դեպքում ևս վերջնական է և հետագա բողոքարկման յենթակա չէ:

ՀԱՐՅ 79.—Կարելի՞ չէ արդյոք մի թեկնածուին առաջադրել մի քանի ոկրուգներում:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Վո՞չ, չի կարելի: «Կանոնադրության» 62-րդ հոդվածը վորպէս կանոն սահմանում է, վոր ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի պատգամավորության թեկնածուն կարող է քվեարկվել միմիայն մի ոկրուգում:

Յեթե մեկից ավելի ոկրուգում չի կարելի քվեարկվել, ապա, բնականաբար, միևնույն թեկնածուն չի կարող մեկից ավելի ոկրուգում առաջադրվել:

Բացի դրանից, վորպեսզի կարելի լինի վորպէս թեկնածու առաջադրվել վորևէ ոկրուգում, թեկնածուն պետք է «Կանոնա-

դրության» 61-րդ հոդվածի «բ» կետի համաձայն հայտարարի, թէ ինքը համաձայն է քվեարկվել տվյալ ոկրուգում: Յերկու և ավելի ոկրուգում քվեարկվելու ցանկութիւն հայտնել չի կարող և վոչմի թեկնածու, վորովհետև որենքը թույլատրում է քվեարկվել միմիայն մի ոկրուգում:

ՀԱՐՅ 80.—Ի՞նչ բան է ընտրական բյուլետենը:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Ընտրական բյուլետեն է կոչվում սահմանված ձևով տպագրված այն թերթիկը, վորի վրա նշանակված են լինում ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի պատգամավորության թեկնածուները:

ՀԱՐՅ 81.—Ի՞նչ լեզվով պիտի տպագրված լինեն ընտրական բյուլետենները:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Ընտրական բյուլետենները պետք է տպագրված լինեն համապատասխան ընտրական ոկրուգի բնակչության լեզվով: Յեթե տվյալ ոկրուգում կան տարբեր լեզուներով խոսող բնակչության խմբեր, ապա ընտրական բյուլետեններն ել պետք է տպագրվեն այդ լեզուներով, վորպէսզի յուրաքանչյուր ընտրող կարողանա քվեարկել իր մայրենի լեզվով:

ՀԱՐՅ 82.—Ի՞նչպէս և վո՞րտեղ են ընտրողներն ընտրական բյուլետեններ ստանում:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Ըստ «Ընտրութիւնների կանոնադրության»՝ բյուլետենները պետք է տպագրվեն Միության Խորհրդի և Ազգութիւնների Խորհրդի ընտրութիւնների ոկրուգային ընտրական հանձնաժողովների կողմից վոչ ուշ քան 15 որ՝ առաջ նախքան ընտրութիւնները և ուղարկվեն բոլոր տեղամասային ընտրական հանձնաժողովներին:

Ընտրութիւնների որը ընտրողներն ընտրական բյուլետեններ կստանան ընտրական տեղամասերում իրենց ընտրական հանձնաժողովներից (հոդված 78):

Գ Լ Ո Ի Խ Վ II

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

ՀԱՐՅ 83.—Ի՞նչպէս պիտի կատարվեն ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրութիւնները՝ մի՞ որում, թէ մի քանի որվա ընթացքում:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Ընտրական որենքում ասված է. «ԽՍՀՄ Գերա-

«Դուք խորհրդի ընտրութիւնները կատարվում են մի որվա ընթացքում, վորն ընդհանուր և ամբողջ ԽՍՀՄ համար» (հոգւած 71): Այդ որը անպատճառ պետք է լինի վոչ-աշխատանքային որ, այլ կերպ հնարավոր է, վոր ընտրողների մի մասը չներկայանա ընտրութիւններին:

Մի քանի բուրժուական յերկիրներում, ընդհակառակը, ընտրութիւնները հատկապես նշանակվում են աշխատանքային որեր: Դրանով հետադնդվում է մի նպատակ, այն է՝ ընտրութիւններին մասնակցելուց հեռացնել աշխատավորներին և հատկապես բանվորներին, վորոնք իրենց ճնշող մեծամասնութամբ կքվեարկէին ընդդէմ բուրժուական կուսակցութիւնների թեկնածուների:

ՀԱՐՅ 84.—Ըստ «Ընտրութիւնների կանոնադրութեան» ԽՍՀ Միութեան Գերագույն Խորհրդի ընտրութիւնների որը սահմանվում է Գերագույն Խորհրդի Նախագահութեան կողմից ընտրութիւնների ժամկետից յերկու ամիս առաջ: Ո՞վ կսահմանի ընտրութիւնների որը նախքան ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի կազմվելը:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Նախքան ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի կազմվելը, այն բոլոր լիազորութիւնները, վոր պատկանում են ԽՍՀՄ Գերագույն Խորհրդին՝ վորպես յերկրի բարձրագույն որենադիր որդանի, պատկանում են ԽՍՀ Միութեան Կենտրոնական Գործադիր Կոմիտէին: Հետեապես, ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրութեան որը կսահմանի ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտէի Նախագահութիւնը՝ վորպես մի մարմին, վորին պատկանում են նույն իրավունքները, ինչ և ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահութեանը:

ՀԱՐՅ 85.—Վո՞ր տեղ պիտի տնենա քվեարկութիւնը:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Քվեարկութիւնը տեղի կունենա հատկապես ընտրութիւնների համար հատկացված շէնքերում: Այդ շէնքերի տեղի մասին, ինչպես և ընտրութիւնների որվա մասին տեղամասային ընտրական հանձնաժողովները կհրապարակեն կամ մի այլ ձևով լայնորեն կտեղեկացնեն ընտրողներին ամեն որ մինչև ընտրութիւնները մնացած վերջին 20 որվա ընթացքում (հոգւած 73):

ՀԱՐՅ 86.—Վո՞ր ժամերին պիտի տեղի ունենան ընտրութիւնները:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Ընտրութիւնները տեղի պիտի ունենան առաւոյտյան ժամի 6-ից մինչև գիշերվա ժամի 12-ը (հոգւած 74):

Ընտրութիւնների որը գիշերվա ժամի 12-ին տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ձայներ տալն ավարտված է հայտարարում: Դրանից հետո հանձնաժողովն սկսում է բանալ քվեատուիներն ու հաշվել ձայները:

ՀԱՐՅ 87.—Ի՞նչպես պիտի կատարվի քվեարկութիւնը:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Քվեարկելու համար յուրաքանչյուր ընտրողը պետք է անձամբ ներկայանա այն շէնքը, վոր հատկացված է քվեարկութեան համար: Այստեղ նա պետք է տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարին ներկայացնի կա՛մ անձնագիրը, կա՛մ կոլտնտեսային գրքույկը, կա՛մ արձիւթեան տոմսը, կամ վորեւէ այլ անձնական վկայական: Ընտրողների ցուցակով ստուգվելուց ու ընտրողների ցուցակում նշվելուց հետո նա կստանա ընտրական բյուլետեններ ու սահմանված ձևի ծրար:

Ընտրական բյուլետենները վերցրած՝ նա կանցնի մի առանձին սենյակ բյուլետենները լրացնելու համար: Այստեղ կողմնակի անձերի ու ընտրական հանձնաժողովի անդամների բացակայութեամբ նա յուրաքանչյուր բյուլետենում պետք է թողնի այն թեկնածուի ազգանունը, անունը, վորին նա քվեարկում է, ջնջելով մնացած բոլոր թեկնածուների ազգանունները: Դրանից հետո բյուլետենները դնելով ծրարի մէջ ու ծրարը փակցնելով, ընտրողը կանցնի այն սենյակը, վորտեղ դրնվում է տեղամասային ընտրական հանձնաժողովը, և իր ծրարը կդնի ընտրական արկղի մէջ (հոգւածներ 78, 80):

ՀԱՐՅ 88.—Բյուլետենները լրացնելու համար հատկացված սենյակում կարո՞ղ են միաժամանակ մի քանի ընտրողներ լինել:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Կարող են լինել և մի քանի ընտրողներ:

ՀԱՐՅ 89.—Այդ դեպքում ի՞նչպես կապահովվի քվեարկութեան գաղտնի լինելը: Չե՞ վոր ուրիշ ընտրողներ կարող են տեսնել, թէ ով է ջնջված և ով է թողնված բյուլետենում:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Քվեարկութեան գաղտնի լինելն ապահովելու համար որենքը պարտադրում է միջնորմներով կամ չիմմաներով այնպես սարքավորել այդ սենյակը, վորպեսպի մի ընտրողը չկարողանա տեսնել, թէ ինչ է անում մյուս ընտրողը (հոգւած 77):

ՀԱՐՅ 90.—Ի՞նչպես պիտի քվեարկեն անգրագետները:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Անգրագետների համար որենքը բացառութիւն է անում: Համաձայն 81-րդ հոգւածի՝ անգրագետներն իրավունք ունեն ընտրական բյուլետենների լրացման սենյակը հրավիրել վոր-

յեւիւ մի ալ ընտրողի, վորպեսզի նա ողնի ընտրողին՝ լրացնելու բոլրեւորութիւնը:

ՀԱՐՅ 91.—Ի՞նչպէս պիտի քվեարկեն հաշմանդամները կամ այն անձերը, վորոնք իրենց ֆիզիկական թերութեան հետեանքով անկարող կլինեն ինքնուրույն կերպով լրացնել բոլրեւորութիւնը:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Այդպիսիների համար, ինչպէս նաև անդրադեաների համար, որենքը նախապիսի բացառութիւն է անում: Նրանք կարող են ընտրական բոլրեւորութիւնների լրացման սենյակը հրավիրել վոր ընտրողին վոր ցանկանան, վորպեսզի սա ողնի իրենց՝ բոլրեւորութիւնը լրացնելու:

ՀԱՐՅ 92.—Ի՞նչպէս պիտի քվեարկեն հիվանդները հիվանդանոցներում և ծննդկանները՝ ծննդյան տներում:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Յեթե հիվանդանոցում կամ ծննդյան տանք կգտնվեն 50 ընտրողից վոչ պակաս, ապա այստեղ կարող է կազմակերպվել ընտրական տեղամաս: Հիվանդներն ու ծննդկաններն այդ գեպքում կքվեարկեն հիվանդանոցների ու ծննդյան տների շենքերում, վորտեղ այդ նպատակով հատուկ սենյակներ կառանձնացվեն: Անկողնի մեջ պառկած հիվանդները հնարավորութիւն կստանան իրենց բոլրեւորութիւնները գցելու ընտրական արկղների մեջ իրենց պալատում և կամ մի ալ ձևով, նայած հանդամանքներին: Կարևոր է միայն, վորպեսզի տեղամասային ընտրական հանձնաժողովը ընտրութիւնների տեխնիկական կազմակերպի որենքի պահանջներին ճիշտ համապատասխան կերպով: Այս պահանջները կատարել կարելի չեթե՝ հիվանդանոցում և թե՞ ծննդյան տանք:

ՀԱՐՅ 93.—Ընտրութիւնների ժամանակ կթույլատրվի՞ արդեւոր ընտրական ազիտացիա:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Այս հարցին ուղղակի պատասխանում է «Կանոնադրութեան» 70-րդ հոդվածը: Այս հոդվածում ասվում է. «Յուրաքանչյուր կազմակերպութեան համար, վորն առաջադրել է Ոկրուդային ընտրական հանձնաժողովում ցուցակադրված թեկնածու, հավասարապէս և ԽՍՀՄ յուրաքանչյուր քաղաքացու համար իրավունք է ապահովվում անարգել ազիտացիա մղելու այդ թեկնածուի ոգտին ժողովներում, մամուլում և այլ յեղանակներով, համաձայն ԽՍՀՄ Սահմանադրութեան 125-րդ հոդվածի»:

Այս կանոնից որենքը միայն մի բացառութիւն է անում՝ ձայներ տալու ժամանակ ընտրական շենքում ընտրական ազիտացիա չի թույլատրվում (հոդված 82):

ՀԱՐՅ 94.—Ձե՞ն վորձի արդեւոր տրոցկիստական-բուխարինայան դավաճանները և ոտարերկրյա հետախուզութիւնների ալ ազեխտներ, ինչպէս նաև հակախորհրդային զանազան տարրեր ընտրական ազիտացիայի իրավունքն ոգտադրծել խորհրդային իշխանութեանն ու սոցիալիզմի գործին թշնամական նպատակների համար:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Անտարակույս, այդպիսի վորձեր կլինեն: Տերտերական, ազանդավորական և հակախորհրդային ալ տարրեր արդեն այժմ էլ վործում են մեղ թշնամական ազիտացիա ծավալել, քողարկվելով Սահմանադրութեան կողմից ազդարարված խոսքի, մամուլի և այլն ազատութեամբ:

Թշնամին վործում է տեղ-տեղ ներս խցկել իր թեկնածուներին, գործի դնելով ամեն տեսակ հնարավոր միջոցներ ու ամեն տեսակ ստորութիւններ: Տերտերները «կսարսափեցնեն» աստու ջարկութեամբ: Տրոցկիստները, բուխարինականները, մենչեիկները, եսերները և զանազան ազտեղութիւններ ամեն տեսակ յերկերեսանկութիւն ու ստորութիւն կանեն, միայն թե թաքցնեն իրենց իսկական դեմքը, խաբեն ընտրողներին ու ներս սողոսկեն մեր որենադրական որդանը:

Դրա համար էլ պետք է սուր զգոնութիւն, վորպեսզի կարելի լինի ժամանակին նկատել այդ թշնամական, նենդ դավերը, անխնա կերպով մերկացնել թշնամուն, խայտառակութեամբ նշալալել նրա հանցագործութիւնները և այդպիսիներն արմատից պոկել մեր հարազատ յերկրի հողից:

Գ. Լ. ՈՒՆՈՎ VIII

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

ՀԱՐՅ 95.—Ի՞նչ կարգով պիտի կատարվի ձայների հաշվումը:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Ձայների հաշվումն ըստ յուրաքանչյուր ընտրական ոկրուդի պիտի կատարվի այսպէս. սկզբում տեղամասային ընտրական հանձնաժողովները կհաշվեն այն ձայները, վոր տրված են ըստ ընտրական տեղամասերի, և քվեարկութեան արտրոնքներն ըստ տեղամասերի կգրանցեն հատուկ արձանագրութիւնների մեջ, իսկ հետո ոկրուդային ընտրական հանձնաժողովները — Միութեան Խորհրդի ընտրութիւններինն ու Ազգու-

թյունները խորհրդի ընտրություններին առանձին—ըստ այդ արձանագրությունների կհաշվեն ամբողջ ընտրական ոկրուդի ձայնները և կվորոշեն, թե տվյալ ոկրուդի համար առաջադրված թեկնածուներից ով և համարվում ընտրված վորպես ՍՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր:

ՀԱՐՑ 96.—Ի՞նչպես պիտի կատարվի ձայների հաշվումը տեղամասային ընտրական հանձնաժողովների կողմից:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Այդ հաշվումը կկատարվի ըստ այն կանոնների, վոր շարադրված են «Ընտրությունների կանոնադրության» 86—93 հոդվածներում:

Այդ կանոնները կայանում են հետևյալում. սկզբում տեղամասային ընտրական հանձնաժողովը պետք է, բանալով արկղները, տրված ծրարների թիվը համեմատի քվեարկությանը մասնակցած անձերի թվի հետ և արդյունքները նշի արձանագրության մեջ: Ծրարների թիվը քվեարկությանը մասնակցած ընտրողների թվի հետ համեմատելուց հետո հանձնաժողովի նախագահը պետք է բանա ծրարներն ու հանձնաժողովի բոլոր անդամների ներկայությամբ հայտարարի քվեարկության արդյունքներն ըստ յուրաքանչյուր բյուլետենի, այսինքն ասի այն թեկնածուի ազգանունը, վոր ցուցակում մնացել է չջնջված: Բոլոր այն թեկնածուները, վորոնց ազգանունները չնջված են, համարվում են չընտրված: Յուրաքանչյուր պատգամավորության թեկնածուի համար կազմվում է հաշվային թերթիկ (յերկու որինակ), վորի մեջ նշվում է յուրաքանչյուր ձայն, վոր տրված է հոգուտ այս կամ այն թեկնածուի:

Այս հանձնաժողովը պետք է հաշվի ձայներն ըստ յուրաքանչյուր թեկնածուի, կազմի քվեարկության արձանագրությունը 3 որինակ՝ ըստ կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած ձևի, և հանձնաժողովի բոլոր անդամների ներկայությամբ հայտարարի քվեարկության արդյունքները, այսինքն՝ թե հոգուտ ամեն մի թեկնածուի քանի ձայն է տրված:

ՀԱՐՑ 97.—Կարո՞ղ է արդյոք տեղամասային ընտրական հանձնաժողովն այս կամ այն բյուլետենն անվավեր ճանաչել:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Այո՛, տեղամասային ընտրական հանձնաժողովը կարող է անվավեր ճանաչել այն բյուլետենները, վորոնք քվեարկության սահմանված կանոններին չեն համապատասխանում:

ՀԱՐՑ 98.—Ի՞նչպիսի բյուլետենները կհամարվեն անվավեր:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Համաձայն «կանոնադրության» 90-րդ հոդվածի անվավեր կհամարվեն՝

ա) վոչ-սահմանված ձևի ու գույնի բյուլետենները,

բ) առանց ծրարի կամ վոչ-սահմանված ձևի ծրարով տրված բյուլետենները,

գ) ընտրելիք պատգամավորների թիվը գերակշռող թեկնածուներ ունեցող բյուլետենները:

ՀԱՐՑ 99.—Ինչո՞ւ պիտի այդպիսի բյուլետեններն անվավեր համարվեն:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Վոչ-սահմանված ձևի ու գույնի բյուլետեններն անվավեր պիտի համարվեն այն հասարակ պատճառով, վոր այդպիսի բյուլետեններ տալը կարող է խախտել ընտրությունների գաղտնի լինելը: Ուստի և Ընտրական օրենքը սահմանում է բյուլետենի վորոշ ձև և գույն և նախազգուշացնում է, վոր ուրիշ ձևի ու գույնի բյուլետենները կճանաչվեն անվավեր:

Առանց ծրարի տրված բյուլետենները պետք է անվավեր համարվեն այն պատճառով, վոր այսպիսի բյուլետեններ տալը նույնպես չի ապահովում քվեարկության գաղտնի լինելը:

Առանց ծրարի բյուլետենը—դա բաց բյուլետեն է: Այդպիսի բյուլետեններով քվեարկելը հավասարազոր է բաց քվեարկությանը: Այդպիսի քվեարկությունը խախտում է մեր Սահմանադրությունը, վոր գաղտնի քվեարկություն է սահմանել:

Միևնույն նպատակին—քվեարկության գաղտնիությունն ապահովելուն—է ծառայում նաև բյուլետենները սահմանված ձևի ծրարով ներկայացնելու պահանջը: Քանի վոր բոլոր ծրարները կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից սահմանված միևնույն ձևի կլինեն, ապա և ծրարներով կարելի չի լինի իմանալ, թե ով և ինչպես է քվեարկել: Գործն այլ կերպ կլիներ, նալ, թե ով և ինչպես է քվեարկել: Գործն այլ կերպ կլիներ, յեթե յուրաքանչյուր ընտրող բյուլետենը ներկայացներ այնպիսի ծրարով, վորպիսի ծրարով վոր կամենար: Այն ժամանակ այդպիսի ծրարներով ցանկության դեպքում կարելի կլիներ իմանալ, թե այդ ծրարն ում է պատկանում, ապա նաև այն, թե հոգուտ ում է քվեարկել տվյալ ընտրողը:

Քվեարկության գաղտնիությունն ապահովելու նպատակով, քվեարկության արդյունքները վորոշելու հարմարության համար և քվեարկության ու ձայները հաշվելու ժամանակ վորևէ չարարկություն կանխելու համար վավերական պիտի ճանաչել միայն սահմանված ձևի բյուլետեններն ու ծրարները:

Վերջապես, վերջին պայմանը.

վավերական կճանաչվի միայն այն բյուլետենը, վորի մեջ թեկնածուների քանակը չի գերազանցի ընտրելիք պատգամավորների թվին: Այս պայմանը միանգամայն հասկանալի չէ. ըստ յուրաքանչյուր ընտրական ոկրուզի կարելի չէ ընտրել միայն մեկ պատգամավոր: «Վանոնադրության» 21 և 22-րդ հոդվածներն ապուժ են, վոր յուրաքանչյուր ընտրական ոկրուզ ուղարկում է միայն մեկ պատգամավոր:

Յեթե բյուլետենում լինեն միքանի թեկնածուներ,—իսկ այդ միանգամայն հնարավոր է և ուրինական,—և ընտրողը ջնջի բոլոր թեկնածուների աղգանունները, բացի, ասենք, յերկուսից կամ յերեքից, ապա ընտրական հանձնաժողովի համար մուլթն է մտնում, թե այդ յերկու-յերեք թեկնածուից ընտրողն ում է կամենում պատգամավոր ընտրել: Յուրաքանչյուր ընտրող ընտրական բյուլետենի մեջ յեղած բոլոր թեկնածուներից պետք է մեկին ընտրի: Այդ մեկի աղգանունն եւ հենց նա պիտի թողնի առանց ջնջելու: Յեթե նա առանց ջնջելու թողնի վոչ թե մեկ, այլ յերկու, յերեք կամ ավելի աղգանուն, ապա անկարելի կլինի վորոշել, թե հատկապես հոգուտ ում է տրված այդ բյուլետենը:

Այդպիսի դեպքում բյուլետենը պետք է համարել անվավեր, ինչպես այդ նախատեսվում է մեր ընտրական օրենքի կողմից:

ՀԱՐՑ 100.—Կարո՞ղ է արդյոք ընտրողը բյուլետենի մեջ նոր թեկնածու մտցնել, վորը չի նշանակված բյուլետենում:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Բվեարկվել կարող են միայն այն թեկնածուները, վորոնք իր ժամանակին ոկրուզային ընտրական հանձնաժողովներում ռեզիստրացիայի յենթարկված են յեղել: Յեթե նրանք իր ժամանակին ռեզիստրացիայի յենթարկված չեն յեղել և չեն մտցվել ընտրական բյուլետենների մեջ, ապա նրանք չեն եւ կարող հետագայում անաջադրվել վորպես թեկնածու: Ուստի և ընտրողը արդեն չի կարող ընտրական բյուլետենի մեջ վոչ մի նոր թեկնածու մտցնել: Յեթե նա բյուլետենի մեջ նոր թեկնածու մտցնի, ապա նրա ձայնը կկորչի:

ՀԱՐՑ 101.—Ի՞նչպես պիտի ոկրուզային ընտրական հանձնաժողովները հաշվեն ձայները:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Միության Խորհրդի ընտրությունների և Սգությունների Խորհրդի ընտրությունների ոկրուզային ընտրական հանձնաժողովներն առանձին կհաշվեն ձայներն ըստ այն արձա-

նադրությունների, վոր նրանք կստանան տեղամասային ընտրական հանձնաժողովներից:

Յուրաքանչյուր ոկրուզային ընտրական հանձնաժողով յուրաքանչյուր թեկնածուի համար կկազմի առանձին հաշվային թերթ: Այդ հաշվային թերթում կնշվի, թե տվյալ թեկնածուն քանի ձայն է ստացել, վորից հետո արձանագրություն կկազմվի (յերկու ուրինակ)՝ ստորագրված ոկրուզային ընտրական հանձնաժողովի նախագահի, քարտուղարի և բոլոր անդամների կողմից:

ՀԱՐՑ 102.—Ի՞նչ պիտի մատնանշված լինի ոկրուզային ընտրական հանձնաժողովի արձանագրության մեջ:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Ոկրուզային ընտրական հանձնաժողովի արձանագրության մեջ պետք է մատնանշված լինի.

ա) ոկրուզի ընտրողների ընդհանուր թիվը.

բ) քվեարկությանը մասնակցած ընտրողների ընդհանուր թիվը.

գ) հոգուտ պատգամավորության յուրաքանչյուր թեկնածուի տրված ձայների թիվը.

դ) ոկրուզային ընտրական հանձնաժողովին տրված հայտարարությունների ու բողոքների համառոտ շարադրանքը և ոկրուզային ընտրական հանձնաժողովի ընդունած վորոշումը:

ՀԱՐՑ 103.—Ի՞նչպես է ապահովվում տեղամասային և ոկրուզային ընտրական հանձնաժողովների գործողություններին վերահսկելը:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Այդ վերահսկողությունը լիովին ապահովվում է:

Ս. չենքում, վորտեղ տեղամասային ընտրական հանձնաժողովը հաշվում է ձայները, կարող են ներկա գտնվել աշխատավորների հասարակական կազմակերպությունների և ընկերությունների՝ դրա համար հատկապես լիազորված ներկայացուցիչները, ինչպես նաև մամուլի ներկայացուցիչները (հոդվ. 85):

Խորհրդային հասարակայնության ներկայացուցիչների ներկայությունն անկասկած կապահովի ընտրական հանձնաժողովների անդամների կողմից ձայները ճիշտ հաշվելու բոլոր պայմանների պահպանումը և կվերացնի ամեն մի հնարավորություն վորեւ սխալի, և մանավանդ՝ չարարկության:

Աշխատավորների հասարակական կազմակերպությունների և ընկերությունների ներկայացուցիչները և մամուլի ներկայացու-

ցիւնները կարող են ներկա լինել նաև ուղրուղային ընտրական հանձնաժողովների կողմից ձայները հաշվելու ժամանակ:

Հետևապես, այս դեպքում ևս հասարակական վերահսկողութունը լիովին ապահովված է:

Սակայն այս դեռևս բոլորը չէ: Ինչպես տեղամասային ընտրական հանձնաժողովները, նույնպես և ուղրուղային ընտրական հանձնաժողովները պարտավոր են կազմել քվեարկութային արձանագրութայիններն այն ձևով, վոր ցույց է տրված «Կանոնադրութային» 93 և 102 հոդվածներում: Այս արձանագրութայիններում պետք է կարճառոտ կերպով շարադրված լինի նաև այն բողոքների ու հայտարարութայինների բովանդակութայինը, վոր տրվել են տեղամասային ու ուղրուղային ընտրական հանձնաժողովներին, և այն վորոշումները, վոր հիշյալ հանձնաժողովներն ընդունել են այդ բողոքների ու հայտարարութայինների առթիվ:

Տեղամասային ընտրական հանձնաժողովների արձանագրութայիններն անցնում են համապատասխան ուղրուղային ընտրական հանձնաժողովներին, Միութայն Խորհրդի ընտրութայինների ուղրուղային ընտրական հանձնաժողովների արձանագրութայինները՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովին, իսկ Ազգութայինների Խորհրդի ընտրութայինների ուղրուղային ընտրական հանձնաժողովների արձանագրութայինները՝ համապատասխան միութենական հանրապետութային, ավտոնոմ հանրապետութային, ալիտոնոմ մարզի ընտրական հանձնաժողովին: Այս բանը համապատասխան վերադաս ընտրական հանձնաժողովներին հնարավորութային և տալիս վերահսկողութային յենթարկելու տեղամասային ու ուղրուղային հանձնաժողովների գործողութայինները և անհրաժեշտութային դեպքում հարկավոր ուղղումները մտցնելու:

ՀԱՐՅ 104.—ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի պատգամավորութային թեկնածուներից ո՞վ կհամարվի ընտրված:

ՊԱՏԱՍԽԱՆ.—ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի պատգամավոր ընտրված կհամարվի նա, ով ասացել է ձայների բացարձակ մեծամասնութային, այսինքն բոլոր այն ձայները կեսից ավելին, վոր ուղրուղում տրված են յեղել և վավերական հանաչված:

ՀԱՐՅ 105.—Արդյոք բոլոր դեպքերում ընտրված կհամարվի այն թեկնածուն, վոր ասացել է ձայների բացարձակ մեծամասնութային:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Այո, վոր բոլոր դեպքերում: Յեթե ընտրութայիններին մասնակցի ուղրուղում ձայնի իրավունք ունեցող բո-

լոր ընտրողների կեսից պակաս մասը, ապա այդպիսի ընտրութայինները կհանաչվեն անվավեր: Հետևապես, այդպիսի ընտրութայինների ժամանակ բացարձակ մեծամասնութային ստացող թեկնածուն ընտրված համարվել չի կարող:

Միքանի կապիտալիստական յերկիրներում, որինակ՝ Լեհաստանում, ընտրութայինները վավերական են համարվում նաև ընտրողների 30%-ի ներկայութային դեպքում: Ըստ մեր որենքների, հասկանալի յե, դա անթույլատրելի կլիներ:

ՀԱՐՅ 106.—Ի՞նչ նշանակութային ունի, թե արդյոք ընտրութայինը կկատարվի բացարձակ թե հարաբերական մեծամասնութային:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Սա շատ մեծ նշանակութային ունի: Մենք վերնարդեն տեսանք, վոր հարաբերական մեծամասնութային դեպքում ընտրված կարող է դուրս գալ այն թեկնածուն, վորի դեմ կարտահայտվի ընտրողների մեծամասնութայինը: Բուրժուազիայի համար սա շատ կարևոր է: Հարաբերական մեծամասնութային սկզբունքի ողնութային բուրժուազիական հնարավորութային է ստանում ներս խցկելու իր թեկնածուներին՝ ընդդեմ մեծամասնութային կամքի:

Շնորհիվ այսպիսի ընտրական ֆոկուսների՝ կապիտալիստական յերկիրներում այնպես է ստացվում, վոր կոմունիստները և հասարակութային մյուս առավել հեղափոխական ուժերը չեն կարողանում պառլամենտ անցկացնել այնքան պատգամավոր, վորքան համապատասխանում է նրանց տրված ձայների քանակին:

Ֆրանսիայում 1932 թ. ընտրութայինների ժամանակ կոմունիստներն ստացան 800 հազ. ձայն և պառլամենտ անցկացրին միայն 12 պատգամավոր, իսկ «Հանրապետական դեմոկրատական միութային» բուրժուական կուսակցութայինը, վոր հավաքել էր 1200 հազ. ձայն, անցկացրեց 76 պատգամավոր: Իսկ ռադիկալ սոցիալիստների բուրժուական կուսակցութայինը՝ ունենալով 1850 հազ. ձայն, անցկացրեց նույնիսկ 157 պատգամավոր:

Ահա թե ինչի յեն հասցնում ամեն տեսակ բուրժուական «դեմոկրատական» ընտրական հնարքները, բուրժուական ընտրական մեխանիզմի ֆոկուսները:

ՀԱՐՅ 107.—Ըստ մեր ընտրական որենքի թույլատրվում են արդյոք վերաքվեարկութայիններ ու նոր ընտրութայիններ և վոր դեպքերում:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Այո, թույլատրվում են: Վերաքվեարկում կա-

տարվում է այն դեպքում, յերբ թեկնածուներից վոչ մեկը չի ստացել բացարձակ մեծամասնություն, այսինքն՝ թեկնածուներից յուրաքանչյուրն ստացել է տրված ձայների կեսից պակասը:

Յեթե, որինսկ, քվեարկել է 100 հազ. ընտրող, և պայքարն ընթացել է հինգ թեկնածուի շուրջը, վորոնցից առաջինն ստացել է 5 հազ. ձայն, յերկրորդը՝ 15 հազ. ձայն, յերրորդը՝ 28 հազ. ձայն, չորրորդը՝ 20 հազ. ձայն և հինգերորդը՝ 32 հազ. ձայն, ապա թեկնածուներից վոչ մեկը չի ընտրվի: Այսպիսի դեպքում նշանակվում է վերաքվեարկություն, բայց վոչ թե բոլոր թեկնածուների միջև, այլ միայն յերկուսի միջև, վորոնք ստացել են ամենաշատ ձայն: Հետևապես, մեր որինսկում վերաքվեարկումը կկատարվի յերրորդ և հինգերորդ թեկնածուների միջև:

ՀԱՐՅ 108.—Ո՞ւմ կողմից և ի՞նչ ժամկետում է նշանակվում վերաքվեարկումը:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Վերաքվեարկումը նշանակվում է ըստ պատկանելուն Միության Սորհրդի կամ Ազգությունների Սորհրդի ընտրությունների ոկրուդային ընտրական հանձնաժողովի կողմից և վոչ ուշ, քան 2-շաբաթյա ժամկետում առաջին տուրի ժամկետն անցնելուց հետո, այսինքն սկզբնական ընտրությունների որվանից սկսած:

ՀԱՐՅ 109.—Ի՞նչպես վարվել այն դեպքում, յեթե քվեարկել է տվյալ ընտրական ոկրուդի ընտրողների կեսից պակասը:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Այն դեպքում, յերբ ոկրուդում տրված ձայների քանակը կազմում է այդ ոկրուդում քվեարկելու իրավունք ունեցող ընտրողների կեսից պակասը, պետք է նշանակվեն նոր ընտրություններ: Այդ դեպքում համապատասխան ընտրական հանձնաժողովը այդ փաստի մասին նշում է արձանագրության մեջ և անհապաղ հաղորդում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովին ու Ազգությունների Սորհրդի ընտրությունների հանրապետական կամ ավտոնոմ մարդի ընտրական հանձնաժողովին:

Նոր ընտրությունները նշանակվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից վոչ ուշ, քան առաջին ընտրություններից հետո 2-շաբաթյա ժամկետում:

ՀԱՐՅ 110.—Ընտրողների ի՞նչ ցուցակներով է կատարվում վերաքվեարկությունը:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Ընտրողների այն ցուցակներով, վոր կազմված են յեղել առաջին ընտրությունների համար:

ՀԱՐՅ 111.—Վերաքվեարկությունը, կամ նոր ընտրություն-

ները, կատարվում են ընդհանուր հիմունքներով, թե ինքնին ներկայացնում են վորեւ բացառություն ընտրությունների ընդհանուր կարգից:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Նոր ընտրությունները կատարվում են ընդհանուր հիմունքներով և «ԽՍՀՄ Գերագույն Սորհրդի ընտրությունների կանոնադրության» միանդամայն համապատասխան:

ՀԱՐՅ 112.—Ի՞նչպես վարվել, յեթե ընտրված պատգամավորը վորեւ պատճառով դուրս է գալիս Գերագույն Սորհրդի կազմից:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Այդ դեպքում համապատասխան ընտրական ոկրուդում 2-շաբաթյա ժամկետում նշանակվում են նոր պատգամավորի ընտրություններ: Այս ընտրությունները պետք է տեղի ունենան Գերագույն Սորհրդից պատգամավորի դուրս գալուց հետո յերկու ամսից վոչ ուշ:

ՀԱՐՅ 113.—ԽՍՀՄ Գերագույն Սորհրդից պատգամավորի դուրս գալու դեպքում ո՞վ է նշանակում նոր ընտրությունները:

ՊԱՏԱՍԽԱՆ.—ԽՍՀՄ Գերագույն Սորհրդի Նախագահությունը:

ՀԱՐՅ 114.—Ի՞նչպես է ապահովվում Սահմանադրության և «Ընտրությունների կանոնադրությամբ» սահմանված ընտրությունների կարգի ճշտությունն ու անձեռնմխելիությունը:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Ընտրությունների կարգը ԽՍՀՄ-ում ապահովվում է առաջին հերթին իրենց իսկ Սորհրդային ընտրողների քաղաքական դիտակցությամբ ու սոցիալիստական դիսցիպլինայով:

ՀԱՐՅ 115.—Պահպանվո՞ւմ է արդյոք ընտրությունների կանոնավորությունը մեր որենքների կողմից:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Այո՛, պահպանվում է: Մասնավորապես պահպանվում է նաև «ԽՍՀՄ Գերագույն Սորհրդի ընտրությունների կանոնադրությամբ»:

«Կանոնադրության» մեջ կան հատկապես 2 հոդվածներ, վորոնք լուրջ պատժով են սպառնում նրանց, ովքեր կփորձեն խանգարել մեր ընտրողներին՝ իրականացնելու իրենց ընտրական իրավունքը: Դրանք «Կանոնադրության» 111 և 112 հոդվածներն են:

ՀԱՐՅ 116.—Ի՞նչ է ասում «Կանոնադրության» 111-րդ հոդվածը:

ՊԱՏԱՍԽԱՆ.—111-րդ հոդվածն ասում է. «Ամեն վոր, ով բռնություն, խաբեբայություն, սպառնալիքների կամ կաշառքի միջոցով խոչընդոտ կհանդիսանա ԽՍՀՄ քաղաքացուն՝ ԽՍՀՄ

Գերադույն Սորհրդի պատգամավոր ընտրելու կամ ընտրվելու իր
իրավունքն իրականացնելու գործում, — պատժվում է ազատա-
զրկմամբ մինչև 2 տարի ժամանակով»:

ՀԱՐՅ 117.—Ի՞նչ է ասում «Կանոնադրության» 112-րդ հոդ-
վածը:

ՊԱՏԱՍԽԱՆ.—«Կանոնադրության» 112-րդ հոդվածն ասում
է. «Սորհրդի այն պաշտոնատար անձը կամ ընտրական հանձնա-
ժողովի անդամը, վորը կկեղծի ընտրական փաստաթղթերը կամ
դիտավորյալ կերպով սխալ կհաշվի ձայները, — պատժվում է ա-
զատազրկմամբ մինչև 3 տարի ժամանակով»:

ՀԱՐՅ 118.—Կա՞ն արդյոք համանման որեւէներ կապիտալիս-
տական յերկիրներում:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Թեև կապիտալիստական յերկիրներում կան
նման որեւէներ, վորոնք ընտրողների վրա բռնութիւն գործա-
դրելու, սրիկայության, կեղծիքի, խաբեբայության և նման բա-
ների համար սպառնում են զանազան ռեպրեսիաներով, սակայն
այդ որեւէները, վորպես կանոն, չեն գործում: Դեռ ամէլին. այդ
յերկիրներում ընտրական բարքերը հասել են քայքայման սահմա-
նին: Ամենքի աչքի առջև և միանգամայն անպատիժ կերպով այս-
տեղ կատարվում են ամենաքիչի քրեական հանցագործութիւն-
ներ—կաշառումներ, կաշառակերութիւն, սրիկայութիւն, խաբ-
դախումներ ու կեղծիքներ, ընտրողների նկատմամբ ուղղակի բռնու-
թիւններ, վորոնք հաճախ վերջանում են սպանութիւններով:

Զխոսելով արդէն Փաշիստական յերկիրների (Գերմանիայի,
Իտալիայի, Լեհաստանի, Ճապոնիայի և ուրիշների) մասին, վոր-
տեղ մոլեգնում է սպիտակ տեռորը, վորտեղ դահիճների կոպիտ
ու լկտի սանձարձակութիւնը սահման չկա, նույնիսկ այսպես
կոչված բուրժուա-դեմոկրատական յերկիրներում ընտրական
կամպանիաները ամեն քայլափոխում փոխարկվում են բացահայտ
ծաղրի «մարդու և քաղաքացու» իրավունքների նկատմամբ, նրա
ազատութեան և հենց պատվի նկատմամբ:

ՀԱՐՅ 119.—Ի՞նչն է պատճառը կապիտալիստական յերկիրնե-
րում տիրող այդպիսի խայտառակ ընտրական բարքերի:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Պատճառը հենց կապիտալիստական կարգի մեջ
է, այնտեղ թագավորող՝ մարդը մարդուն չահագործելու, ճնշելու
մեջ, աշխատավոր մասսաների ստրկութեան ու իրավազրկութեան
մեջ:

Աշխարհում միակ յերկիրը, վորտեղ մարդն ազատ է և ան-

կախ, վորտեղ թագավորում է որեւէ ու կարգը, վորտեղ պե-
տական հզորութիւնն ուղղված է դեպի ընդհանուր բարորութիւն
—դեպի ժողովրդական միլիոնավոր մասսաների, միլիոնավոր ու
տասնյակ միլիոնավոր բանւորների, գյուղացիների և աշխատա-
վոր ինտելիգենցիայի բարորութիւնը, դեպի ամբողջ յերկրի բա-
րորութիւնն ու յերջանկութիւնը, — դա իՍՀՄ է, դա մեր հայ-
րենիքն է, մեր Սորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւն-
ների մեծ Միութիւնը:

Ստալինյան մեծ Սահմանադրութեան դրոշի ներքո խորհրդա-
յին ազատ ժողովուրդը գնում է դեպի իր նոր բարձրագույն որենս-
դիր ուղանի—Սորհրդային Սոցիալիստական Հանրապետու-
թեան Գերադույն Սորհրդի ընտրութիւնները:



Ստալինյան մեծ Սահմանադրութեան
դրոշի ներքո խորհրդային ազատ
ժողովուրդը գնում է դեպի իր նոր
բարձրագույն որենսդիր ուղանի—
Սորհրդային Սոցիալիստական
Հանրապետութեան Գերադույն
Սորհրդի ընտրութիւնները:

Ստալինյան մեծ Սահմանադրութեան
դրոշի ներքո խորհրդային ազատ
ժողովուրդը գնում է դեպի իր նոր
բարձրագույն որենսդիր ուղանի—
Սորհրդային Սոցիալիստական
Հանրապետութեան Գերադույն
Սորհրդի ընտրութիւնները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գլուխ I. Ընտրական սխեմա	62
Գլուխ II. Ընտրողների ցուցակները	3
Գլուխ III. Միության խորհրդի և Ազգությունների խորհրդի ընտրությունների ընտրական ոկրուղները	27
Գլուխ IV. Ընտրական տեղամասերը	32
Գլուխ V. Ընտրական հանձնաժողովները	34
Գլուխ VI. ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամալուրության թեկնածու առաջադրելու կարգը	38
Գլուխ VII. Քաղաքականության կարգը	42
Գլուխ VIII. Ընտրությունների արդյունքների վերջում	49
	53



Թարգմ. Ա. Տ.-Մկրտչյան
 Խմբագիր Ա. Իսահակյան
 Տեխ. խմբ. Ս. Խաչատրյան
 Սրբագրելի Ա. Ելչուքյան
 Կոնտ. սրբագրելի Լ. Արսվյան

Գլավիտի լիազոր Ի—2052 հրատ. № 510
 Պատվեր № 221, արժ 25,000
 Հանձնված և արտադրության 20/XI 1937 թ.
 Ստորագրված և տպելու 28/XI 1937 թ.
 Գին 50 Կ.

Հայկուհրատի տպարան, Յերեան, Ալավերդյան 71

ՀՀ Ազգային գրադարան



NL0200737

537

ԳԻՆԸ 50 Կ.

А. Я. ВЫШИНСКИЙ
ПОЛОЖЕНИЕ О ВЫБОРАХ
В ВЕРХОВНЫЙ СОВЕТ СССР
В ВОПРОСАХ И ОТВЕТАХ
Армиздат, Ереван, 1937